

[illegible]



MARCHÉ ADONIS

Un univers de fraîcheur

Ste-Catherine - Griffintown - Anjou - Sauvé
Place Vertu - DDO - Brossard - Laval - Laval Est - Gatineau
Scarborough - Mississauga

www.groupeadonis.ca /



5 Ապրիլին Հայաստանի Մէջ Տեղի Պիտի Ունենայ Սահմանադրութեան Փոփոխութիւններու Հանրաքուէն

Հայաստանի Ազգային ժողովին կողմէ 6 փետրուար 2020–ին Սահմանադրութեան փոփոխութիւններու նախագիծը հանրաքուէի դնելու մասին որոշման ընդունումէն եւ 7 փետրուարին Ազգային ժողովի նախագահին կողմէ զայն Հանրապետութեան նախագահին ներկայացնելէ ետք, ըստ սահմանադրութեան, Հանրապետութեան նախագահին գործառնոյթները կը սահմանափակուին միայն հանրաքուէի օրը ճշդելով:

Հայաստանի Հանրապետութեան նախագահի աշխատակազմի հասարակութեան հետ կապերու վարչութիւնէն յայտնեցին, որ 9 փետրուարին Հանրապետութեան նախագահը, ղեկավարուելով Սահմանադրութեան 206–րդ յօդուածով, ստորագրած է հրամանագիր Սահմանադրութեան փոփոխութիւններու հանրաքուէն 5 ապրիլին կազմակերպելու վերաբերեալ:

Հրամանագիրին մէջ նշուեցաւ. «Ղեկավարուելով Սահմանադրութեան 206–րդ յօդուածով, ինչպէս նաեւ «Հանրաքուէի մասին» սահմանադրական օրէնքի 12–րդ յօդուածի առաջին մասով եւ հիմք ընդունելով Ազգային ժողովի 2020 թուականի փետրուարի 6–ի «Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան փոփոխութիւնների նախագիծը Հանրաքուէի դնելու մասին» ԱԺՈ–001–Ն որոշումը.

«1. Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան փոփոխութիւններու հանրաքուէն նշանակել 5 ապրիլ 2020–ին:

«2. Սոյն հրամանագիրը ուժի մէջ կը մտնէ պաշտօնական հրապարակման յաջորդող օրը»:

10 փետրուարին հանրապետութեան նախագահի աշխատակազմը հրապարակեց այլ հաղորդագրութիւն մը, որուն մէջ անհրաժեշտ նկատեց մամուլին մէջ տեղ գտած հրապարակումներուն եւ ընթացող քննարկումներուն լոյսին տակ պարզաբանում տալ Ազգային ժողովին կողմէ ընդունուած «Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան փոփոխութիւններու նախագիծը հանրաքուէի դնելու մասին» որոշման առնչութեամբ Հանրապետութեան նախագահի գործառնոյթներուն մասին՝ «հետագայ շահարկումներէ, հակասական մեկնաբանութիւններէ եւ թիւրըմբռնումէ խուսափելու նպատակով»:

Ըստ պարզաբանումին՝ հանրապետութեան նախագահին ներկայացուած փաստաթուղթը օրէնքի նախագիծ չէ, օրէնք չէ, այլ Ազգային ժողովին կողմէ 6 փետրուարին ընդունուած եւ Սահմանադրական փոփոխութիւններու նախագիծը հանրաքուէի դնելու վերաբերող որոշում, որ հրապարակուած է Ազգային ժողովի պաշտօնական կայքին մէջ:

«Վերոնշեալ որոշումին առնչութեամբ Հանրապետութեան նախագահի սահմանադրական գործառնոյթները ընթացակարգային են եւ կը սահմանափակուին միմիայն ու բացառապէս, Սահմանադրութեան 206–րդ յօդուածի համաձայն, եւօրեայ ժամկէտով Հանրաքուէի օր նշանակելու մասին հրամանագիր ստորագրելով:

«Ընդ որում, համաձայն «Հանրաքուէի մասին» սահմանադրական օրէնքի 12–րդ յօդուածին, Հանրապետութեան նախագահին կողմէ վերոնշեալ եւօրեայ ժամկէտի ընթացքին հանրաքուէ չնշանակուելու պարագային հանրաքուէն կը նկատուի նշանակուած՝ սահմանուած ժամկէտի վերջին օրուան յաջորդող 65–րդ օրուան նախօրը կիրակի օրը», նշուեցաւ հաղորդագրութեան մէջ:

ՀՅԴ Գերագոյն մարմնի յայտարարութիւնը

Ափսոսանքով փաստում ենք. օրուայ քաղաքական իշխանութիւնը, չհետեւելով բազմաթիւ յորդորների եւ զգուշացումների, երկիրը ներքաշում է հերթական արկածախնդրութեան մէջ:

Շահարկելով եւ ձեւախեղելով անմիջական ժողովրդավարութեան կարեւոր ինստիտուտ հանդիսացող հանրաքուէն, իշխանութիւնը քողարկում է ամէն գնով մենիշխանութիւն հաստատելու սեփական նպատակն ու երկրի առջեւ ծառացած սպառնալիքները չէզոքացնելու անկարողութիւնը:

Դատապարտելով ամբոխավարական մեթոդներով արհեստական օրակարգ ձաւորելու քաղաքական իշխանութեան վարքագիծը, ահանգանգ հնչեցնելով այս հակասահմանադրական ընթացքի մասին, ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինը յայտարարում է՝ անընդունելի է հակաօրինական ճանապարհով հարցեր լուծելու իշխանութեան մօտեցումը:

Ըստ այդմ.

Կոչ ենք անում ՀՀ քաղաքացիներին՝ մասնակից չգառնալ իշխանութիւնների կողմից նախաձեռնած հերթական ապօրինութեանը, անտեսել ապրիլի 5–ին նշանակուած հանրաքուէն՝ յստակ ուղերձ յղելով իշխանութիւններին, որ ժողովուրդն այլ–ս յոգնել է պոպուլիզմից, արհեստածին օրակարգերից, հասարակութիւնը «սեւերի» ու «սպիտակների» բաժանելու քայքայիչ քաղաքականութիւնից, արդէն շարունակական դարձած ցնցումներից, որոնք այդպէս էլ չնպաստեցին հանրային բարեկեցութեան աճին եւ իրական ժողովրդավարութեանը:

Դիմում ենք քաղաքական կուսակցութիւններին, քաղաքացիական հասարակութեանը, մեր հայրենակիցներին՝ միաւորել իրենց ջանքերը՝ բացառելու «Այո»–ն, կանխելու հակապետական այս ընթացքը եւ, ի վերջոյ, ձեռնամուխ լինել իրական բարեփոխումների իրականացմանը: Այս նպատակներին հասնելու համար Դաշնակցութիւնը կը ձեռնարկի անհրաժեշտ գործողութիւններ:

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմին



Թորոնթոյի «**ՆՈՐ ՀԱՅ ՀՈՐԻԶՈՆ**»
յատագիրը կարելի է դիտել -

Շաբաթ առաւօտեան ժամը 9:00-10:00
Կիրակի առաւօտեան ժամը 6:00-7:00
Երեքշաբթի կէսօրոայ ժամը 12:00-1:00
Յինգշաբթի երեկոյեան ժամը 10:00-11:00

OMNI 1 կայանէն:



ԼՈՒԻ - ՉԱՒԽԵ
ՅԱՆՉԱՄՈՒՄԻՄ

Լոռիի եւ Չաւախքի Հետ

ԶՕՐԱԿՑԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՒԱՔ

Չեկուցաբեր՝
Իվան Արտիալնեան

ՀՕՍ-ի Չաւախք Ֆոնտի Յանձնախումբի Ատենապետ

Տեղի կ'ունենայ

Թորոնթո
Կիրակի Մարտ 15, 2020
Հայ կեդրոնի սրահէն ներս
Կեսօրէ ետք ժամը 1:30-ին
45 Hallcrown Place, Toronto

Մոնթրէալ
Երկուշաբթի Մարտ 16, 2020
Հայ կեդրոնի Ահարոնեան սրահէն ներս
Երեկոյեան ժամը 8:00-ին
3401 Rue Olivar-Asselin, Montreal

ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆԶՆԱԽՈՒՄԲԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տասնամեակներէ ի վեր Սուրիոյ Հայ Դատի Յանձնախումբը քաղաքական, յաբաբերական, քարոզչական, մշակութային հետեւողական աշխատանք կը ծաւալէ հանրային կարծիք ձեւաւորելով՝ Սուրիոյ խորհրդարանին կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման բանաձեւը հաստատելու համար:

Այս շրջագիծէն ներս, անցնող տարիներուն արաբերէն բազմաթիւ հրատարակութիւններ լոյս տեսան՝ գործակցաբար Հայ Դատի բարեկամներու հետ, նոյն նպատակով՝ յարաբերական աշխատանք ծաւալեցաւ Հայոց Յեղասպանութենէն մազապուրծ Սուրիա հասած հայ ժողովուրդին օգնութեան ձեռք երկարած արաբ ցեղապետներուն հետ:

Այս աշխատանքները արդիւնաւորուեցան 13 Փետրուար 2020-ին, երբ Սուրիոյ խորհրդարանի հայազգի երեսփոխաններու եւ սուրիահայ մտաւորականներու ջանքերով, Սուրիոյ խորհրդարանը, որ կը ներկայացնէ սուրիական ընկերութիւնը կազմող բոլոր բաղադրիչները, միաձայնութեամբ ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը եւ դատապարտեց զայն, որպէս 20-րդ դարուն իրագործուած դժան ոճրագործութիւն: Բանաձեւը կ'արտացոլացնէ Սուրիոյ ժողովուրդին տարիներ առաջ ցուցաբերած մարդասիրական վսեմ վերաբերմունքը՝ ցեղասպանութեան օրերուն Սուրիա ապաստանած հայութեան նկատմամբ:

Խորհրդարանին կողմէ ընդունուած այս բանաձեւը կոչ կ'ուղղէ աշխարհի խորհրդարաններուն եւ միջազգային ընտանիքին որդերգելու նոյն կեցուածքը եւ դատապարտելու թուրքիոյ կողմէ մարդկութեան դէմ գործուած այս ոճիրը: Դար մը առաջ գործուած ոճիր մը, որ կը շարունակուի գործադրուիլ այսօր Սուրիոյ հողերուն վրայ, նոյն քաղաքականութեամբ, նոյն ոճով, նոյն ոտնձգութիւններով ու անօրէնութիւններով: Ի վերջոյ նոյն հեղինակն է, որ կը ստորագրէ երկու ոճրագործութիւններուն ներքեւ:

Սուրիահայութիւնը ինչպէս անցեալին, այսօր եւս կը յայտնէ իր ամբողջական զօրակցութիւնը Սուրիոյ արդար պահանջներուն, անոր հողային ամբողջականութեան եւ այդ հողերուն վրայ իր գերիշխանութեան հաստատման: Մօտեցում մը, որ իր արտայայտութիւնը գտաւ Սուրիոյ պատերազմի տարիներուն՝ սուրիական հայրենիքին նկատմամբ սուրիահայութեան դրսեւորած հայրենասիրական մօտեցումներով:

Արձանագրուած այս քայլը Հայ Դատի աշխատանքներուն շրջագիծէն ներս առնուած քայլ մըն է, որ պիտի շարունակուի մինչեւ հայ ժողովուրդի արդար իրաւունքներու հատուցում, մինչեւ զբաւուած հողերու ազատագրում եւ Ազատ, Անկախ ու Միացեալ հայրենիքի կերտում:

ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆԶՆԱԽՈՒՄԲ

Դեկտեմբեր 9 2019-էն սկսեալ, «Հայ Հորիզոն» հեռատեսիլի յայտագիրը պիտի սփռուի հետեւեալ կայաններուն եւ ժամերուն, մէկ ժամուայ տեւողութեամբ:

Videotron:
HD838 կամ SD238

Bell Fibe:
HD1216 կամ SD216

Երեքշաբթի - 9pm (առաջին սփռում)
Չորեքշաբթի - 1:00pm
Հինգշաբթի - 6:00pm
Շաբաթ - 7:00am
Կիրակի - 06:00am, 2:00pm, 1:00am
Երկուշաբթի - 06:00am, 5:00pm, 1:00am

Ուղիղ հեռարձակում www.icitelevision.ca

Սուրիոյ խորհրդարանը միաձայնութեամբ Հայոց Յեղասպանութեան ճանաչման մասին բանաձեւ ընդունեց

Հինգշաբթի, 13 փետրուար 2020-ին, Սուրիոյ խորհրդարանը միաձայնութեամբ ճանչցաւ եւ դատապարտեց 20-րդ դարու ամենասոսկալի իրագործութիւններէն մէկուն՝ ողջ մարդկութեան դէմ իրականացուած յանցագործութեան իրենց հայրենիքի մէջ 1.5 միլիոն հայերու ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութեան կողմէ:

Ցեղասպանութեան ճանաչման բանաձեւի նախագիծի հեղինակն է «Սուրիա-Հայաստան բարեկամական խորհրդարանական յանձնաժողով»-ը, որ կը նախագահէ դոկտ. Նորա Արիսեանը:

20 յունուար 2020-ին, վերոնշեալ Յանձնաժողովը, գումարեց իր արտահերթ նիստը, ուր Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը լայն քննարկման առարկայ դարձաւ: Այնուհետեւ, նիստի տեղեկագիրը ներկայացուեցաւ խորհրդարանի նախագահութեան, որպէսզի խորհրդարանական ժողովի օրակարգի կէտ դառնայ: Արդարեւ, 13 փետրուար 2020-ին, Սուրիոյ խորհրդարանի նիստին օրակարգի վրայ տեղ գտաւ Հայոց ցեղասպանութեան մասին բանաձեւը, որմէ ետք, աւելի քան մէկ ժամ տեւած ելոյթներուն մէջ սուրիացի երեսփոխանները արտայայտեցին իրենց թեզերը եւ զօրակցութիւն յայտնեցին բանաձեւին:

Դոկտ. Նորա Արիսեան այս մասին անդրադառնալով ֆէյսպուքի վրայ հետեւեալ գրառումը կատարած է.

«Նշեմ, որ բանաձեւին մէջ յստակօրէն կ'օգտագործուի «Հայոց ցեղասպանութիւն» բառը, որ եւ զայն դատապարտելու ու ճանչնալու հանգամանքը: Բանաձեւի մէջ մասնաւորապէս կը նշուի.

«Հիմնուելով պատմական իրականութեան վրայ, որ կը հաստատէ Արեւմտեան Հայաստանի տարածքի վրայ 1915-1923-ի միջեւ հայ ժողովուրդի բնաջնջումը,

«Նկատի առնելով, որ ըստ սուրիական աղբիւրներուն՝ Օսմանեան կայսրութեան ժամանակաշրջանին Հայոց ցեղասպանութեան ու ջարդերու մեծ մասը տեղի ունեցաւ սուրիական հողատարածքին վրայ: Արդ, սուրիացի ժողովուրդը դարձաւ ականատեսը այս ոճիրին, ուր 19-րդ դարու վերջին եւ 20-րդ դարասկիզբին թուրք-օսմանցիներու հրամանով տեղի ունեցաւ 1.5 միլիոն հայերու կանխամտածուած ցեղասպանութիւնը,

«Սուրիոյ խորհրդարանը կը դատապարտէ եւ կը ճանչնայ հայերու ցեղասպանութեան ոճիրը, եւ իր խոր զօրակցութիւնը կը յայտնէ եղբայրական հայ ժողովուրդին, ան նաեւ կը դատապարտէ պատմական իրողութիւնը ժխտող եւ խեղաթիւրող, որեւէ փորձ, զայն համարելով մարդկութեան դէմ ամենաճանր ոճիրներէն մէկը:

«Խորհրդարանը կը հաստատէ, որ հայերը, ասորիները, եւ սուրիացի ժողովուրդի այլ մասնիկները զոհ դարձան այդ ժամանակաշրջանին թուրք-օսմանցիներու ձեռքով իրականացուած ջարդերու եւ ցեղային զտումին, եւ կոչ կ'ուղղէ աշխարհի խորհրդարաններուն եւ միջազգային հանրութեան զայն ճանչնալու եւ դատապարտելու»:

Դոկտ. Արիսեան կ'աւելցնէ, թէ Սուրիոյ խորհրդարանի պատգամաւորները բուռն ու յոտնկայ ծափողջիւններով ողջունեցին Հայոց ցեղասպանութեան ճանաչումը: Ան կը յայտնէ նաեւ, որ Սուրիոյ խորհրդարանէն ներս, 2016-էն ի վեր քանի մը անգամ տարբեր առիթներով հնչած էր Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը կարգ մը երեսփոխաններու կողմէ, ինչպէս՝ Նիտալ Հըմետիի, Սամիր Հաժժարի, Ալան Պաքըրի, դոկտ. Նորա Արիսեանի եւ Օմար Աարուպի կողմէ: Դրաւումի վերջաւորութեան դոկտ. Նորա Արիսեան շնորհակալութիւն կը յայտնէ խորհրդարանի գործընկերներուն, որոնք չորս տարուան խորհրդարանական նստաշրջանի ընթացքին զօրակցութիւն ու աջակցութիւն ցուցաբերեցին Հայ դատին ու յատկապէս Հայոց ցեղասպանութեան մասին քուէարկուած բանաձեւին համար: Ան նաեւ շնորհակալութիւն կը յայտնէ Սուրիոյ Հանրապետութեան Նախագահ Պաշար ալ-Ասատին:

Chadir Meat & Restaurant

T. 416-750-7404
T. 416-750-7400
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4
E-mail: info@chadirmeatmarket.com

Anto Keledjian
Sales Representative
Residential & Commercial
Dir: (416) 930-2686
Bus: (416) 588-6777
570 Bloor St. W., Toronto, ON M5S 1K1
ANTOK13@GMAIL.COM • WWW.TORONTOSOLD.CA

SUQ

2 Champagne Drive # B9
Toronto, ON M3J 2C5
Tel: (416) 661 8998
www.suqkitchen.ca

ANI Restaurant

905.761.6484
1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

Sutton
Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0

Annie Varbedian
Sales Representative
Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9367
annievarbed@hotmial.com
www.suttongroupadmiral.com

hearing aid source

Andre Ayvazyan HIS B.A.S.

andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

Gary Chahinian President, Broker of Record
416-258-8892

Gabriel Chahinian Sales Representative
647-580-5818

The Diamond Realty

I.D.A.
Part of the **Royal** family of pharmacies.

Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian

Cassandra Pharmacy Inc.

2040 Victoria Park Ave.
Toronto, Ontario
M1R 1V2

Tel. : **416.449.2040**
Fax: **416.449.2048**

ANI BAKERY
ԱՆԻ ՓՈԱՊԱՆ

Middle Eastern Pizza Lahmajoun

ARSEN DABBAGHIAN

25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8
Tel: 416.285.7164

Հայ Կեդրոնի Տարեցներու միութեան 2019 տարեշրջանի Գիթաբարոյեակաճ գործունեւութեան տեղեկագիր, 9 Յունուար 2019-էճ 29 Յունուար 2020

Հայ Կեդրոնի Տարեցներու միութեան 2019 տա-րեշրջանի անդամական ընդհանուր ժողովը գումար-դեցաւ 9 Յունուար 2019-ին, որուն ընթացքին ընտր-ուեցաւ նոր վարչութիւն մը բաղկացած հետեւեալ ան-դամներէն.-

Անի Գուլումճեան
Մարօ Կոստանեան
Լիւսի Ալեքսանեան
Իտա Գանոնճեան
Գէորգ Տէմիրճեան
Հմայեակ Ամէնճեան
Արամ Նշանեան

Վարչութիւնը իր առաջին նիստին ընտրեց իր գիւանը եւ կատարեց պաշտօններու բաշխումը հետեւ-եալ կազմով.-

Ատենապետ՝ Անի Գուլումճեան
Փոխ ատենապետ եւ գնումներու պատասխանա-տու՝ Հմայեակ Ամէնճեան
Ատենադպրուհի եւ անդամանականի պատասխա-նատու՝ Մարօ Կոստանեան
Ձեռնարկներու պատասխանատու՝ Լիւսի Ալեք-սանեան

Գանձապահուհի՝ Իտա Գանոնճեան
Հաշուապահ՝ Գէորգ Տէմիրճեան
Գոյքապահ՝ Արամ Նշանեան

Վարչութիւնը դրամատան մօտ ստորագրելու իրաւունք տուաւ Հմայեակ Ամէնճեանին, Արամ Նշան-եանին եւ Լեւոն Նաճարեանին: Հաշուեքննիչներ նշա-նակուեցան՝ Ռաֆֆի Աբանեան, Անահիտ Գաբրիէլեան եւ Ալիս Մահսերէճեան:

Վարչութիւնը նշանակեց նաեւ ձեռնարկներու եւ ճաշկերոյթներու յանձնարումքի անդամները, հետեւ-եալ կազմով՝ Գարեգին Վարդանեան, Մէրի Վարդան-եան, Ալիս Մահսերէճեան, Վարդուհի Կարապետեան, Սիլվիա Նաճարեան, Սոնա Պասմանեան, Ռոզիլ Խորա-սանճեան, Փոլին Գապպա եւ յանձնարումքի պատաս-խանատու՝ Շաքէ Ամէճեան:

Կազմուեցաւ նաեւ շաբաթական հաւաքներու սպասարկուելիք ճաշերու, ինչպէս նաեւ տարեկան ձեռ-նարկներու եւ դրօսապտոյտներու ցանկը: Սոյն ցանկը վարչութիւնը պատճէնահանելով ցրուեց իր անդամնե-րուն:

Վարչութիւնը յարմար նկատեց հերթական ժո-ղովները գումարել ամսական դրութեամբ՝ իւրաքան-չիւր ամսուան առաջին երեքշաբթին:

Անցեալ տարեշրջանին վարչութիւնը գումարած էր 12 ժողով եւ բազմաթիւ խորհրդակցական հանդի-պումներ:

Անդամական

Անցեալ տարեշրջանի աւարտին, միութեանս ան-դամներուն թիւն էր՝ 244 անդամ-անդամուհի, տար-ուան ընթացքին ունեցած ենք 6 նորագիրներ, մահացած են 6 անդամ-անդամուհիներ, որով միութեանս անդա-մական ցանկը պիտի ունենար 244 անդամ: Անցնող տարեշրջանին ընթացքին, վարչութիւնս իրենց երկա-րատեւ բացակայութիւններուն ինչպէս նաեւ մեր հե-տապնդումները անպատասխան մնալուն պատճառաւ իր անդամացանկէն դադրեցուցած է 30 անդամ-անդա-մուհիներ, եւ միութեանս այժմու թիւն է 214-244 ան-դամ-անդամուհի:

Կատարուած աշխատանքներ

Ձեռնարկներու եւ այլ յայտարարութեանց սփռումները շարունակուեցան ե-նամակներով եւ հե-ռաձայններով, որոնց շնորհիւ միութիւնը ունեցաւ նոր մասնակցողներ:

Այս տարեշրջանին ալ, երկարատեւ բացականե-րու եւ ապաքինման մէջ եղող անդամներու յատուկ ապաքինման մաղթանքներու նամակներ առագուեցան, թիւով 15 հատ:

Ձեռնարկներ

2019-ին կազմակերպած ենք հետեւեալ ձեռնարկ-ները.-

1.- «Valentine»-ի օր 20 Փետրուարին, ներկա-յութեամբ Գերշ. Տէր Բարգէն Արքեպ. Չարեանի եւ 135 անդամներու եւ բարեկամներու, երգերով եւ նուագով ձեռնարկը խանդավառեցին՝ Արթիւր Աբգարեան, Աւօ Նիկողոսեան, Անիթա Աբանեան եւ Լաուրա Պէրպէր-եան, կիթարի ընկերակցութեամբ՝ Արա Ալեքսանեանի: Օրուայ անուշեղէնը նուիրուած էր Արա Ալեքսանեանի կողմէ:

2.- Մայրերու օր, 22 Մայիսին, ներկայութեամբ Գերշ. Տէր Սուրէն Արք. Գաթարոյեանի եւ 170 անդամ-ներու եւ բարեկամներու, երգով եւ նուագով ձեռնարկը խանդավառեցին Մարթին Եօրկանցն ու Անիթա Աբանեան, կիթարի ընկերակցութեամբ՝ Արա Ալեքսան-

եանի: Յայտագրին իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Լիւսի Ալեքսանեան՝ ասմունքով: Այդ օրուայ անուշե-ղէնը պատրաստուած եւ նուիրուած էր տիկ. Ալիս Մահ-սերէճեանի կողմէ:

3.- «Bake Sale», 31 Մայիսին, անուշեղէններու եւ խմորեղէններու վաճառք, որուն մեծ թիւով անդամ-ներ եւ բարեկամներ իրենց մասնակցութիւնը բերին, կո-կիկ գումար մը ապահովելով միութեան:

4.- Հայրերու օր, 19 Յունիսին, ներկայութեամբ 110 անդամներու եւ բարեկամներու, նուագով իր մաս-նակցութիւնը բերաւ Գրիգոր Տէտէյեան, երգերով՝ Ասողիկ Էսմէրեան, ընկերակցութեամբ Արա Ալեքսան-եանի: Իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Լիւսի Ալեք-սանեան՝ ասմունքով:

5.- Ճաշկերոյթ, 14 Յունիսին,որուն ընթացքին հիւրընկալեցինք Manoir Cartierville-ի մէջ բնակող 30 տարեցներ, ՀՕՄ-ի տարեցները այցելող յանձնարումքի կամաւոր անդամներուն ընկերակցութեամբ, իրենց հրամցուցինք «Հարիսա-գէշքէկ», պատրաստուած եւ նուիրուած տիկ. Անի Շաքէ Ամէճեանի կողմէ, իսկ անուշեղէնը նուիրուած տիկ. Անի Գուլումճեանի կող-մէ:

6.- «bake Sale», 27 Նոյեմբերին, անուշեղէննե-րու եւ խմորեղէններու վաճառք, որուն մեծ թիւով ան-դամներ եւ բարեկամներ իրենց մասնակցութիւնը բե-րին, կոկիկ գումար մը ապահովելով միութեան:

7.- Ծնունդի խրախճանք, 18 Դեկտեմբերին, հիւ-րասիրութիւն-ճաշկերոյթ կազմակերպուած Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ հոգաբարձութեան կողմէ, առ ի գնա-հատանք միութեան տարած գործունէութեան, որուն ներկայ եղան թեմիս բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տէր Բարգէն Արք. Չարեան, Գերշ. Տէր Սուրէն Արք. Գաթա-րոյեան, հովիւ Տէր Գառնիկ Աւ. քահանայ Գոյունեան, եկեղեցւոյ հոգաբարձութենէն Գրիգոր Տ. Ղազարեան, Մոնթրէալի քաղաքապետարանի «Bordeaux-Cartierville» շրջանի ներկայացուցիչ՝ տիկ. Էֆի Ճիա-նու, պրն. Յարութ Շիթիլեան՝ Մոնթրէալի քաղաքապե-տարանի նախկին ներկայացուցիչ եւ ներկայ «Executive director of the affiliate of la caisse de depoit de placements de Quebec», որ մեզի բացատրու-թիւն տուաւ «REM»-ի մասին, որուն ծրագրի տնօրէնն է: Ինչպէս նաեւ 220 անդամներ եւ բարեկամներ: Այս առթիւ տեղի ունեցաւ գեղարուեստական ճոխ յայտա-գիր մը, երգերով եւ նուագներով ձեռնարկը խանդա-վառեցին՝ Արթիւր Աբգարեան, Աւօ Նիկողոսեան, Անի-թա Աբանեան ընկերակցութեամբ՝ Արա Ալեքսանեանի կիթարով, նաեւ Լիւսի Ալեքսանեան ասմունքով, եւ բո-լորը արժանացան ներկաներուն բուռն ծափահարու-թեան:

Այս տարի միութեանս այցելեցին Ս. Յակոբ դպրոցի աշակերտներ, ընկերակցութեամբ տնօրէնուհի Լորի Ապրաքեանի, ներկայացնելու համար 2-րդ դասա-րանի աշակերտներու կողմէ պատրաստուած շնորհաւո-րանքի գարդը եւ անուշեղէններ:

8.- Վարչութիւնը կը տեղեկացնէ, թէ 2019-ի տարեշրջանին իր մասնակցութիւնը բերած է քոյր միութիւններու կազմակերպած բոլոր ձեռնարկներուն:

Ջրօսապտոյտներ

- Ապրիլ 18, «Cabane a Sucre/Chalet de Ruisseau Inter Miel boutique», մասնակցութեամբ 28 անդամներու:

- Յուլիս 18, «Ste. Anne de Bellevue», մասնակ-ցութեամբ 55 անդամներու եւ բարեկամներու:

- Օգոստոս 15, «Bateau Mouche», նաւապտոյտ, մասնակցութեամբ 46 անդամներու եւ բարեկամներու:

- Սեպտեմբեր 17, «Chalet de Ruisseau», մաս-նակցութեամբ 40 անդամներու եւ բարեկամներու:

- Հոկտեմբեր 10, «Mont Tremblant Casino/Village», մասնակցութեամբ 53 անդամներու եւ բարե-կամներու:

- Դեկտեմբեր 2, այցելութիւն 1 կամ 2 շաբաթ «Cuba/Holguin»-ի «Playa Pasquero» ծովափ, մաս-նակցութեամբ 27 անդամներու եւ բարեկամներու, որոնք վայելեցին եւ հաճելի ժամեր անցուցին ուրախ ընկերային մթնոլորտի մէջ:

Շնորհակալական

Վարչութիւնս շնորհակալութիւն կը յայտնէ՝

- Այն բոլոր հաստատութիւններուն եւ միու-թիւններուն, բարեկամներուն եւ անձնաւորութեանց, որոնց քաջալերանքին, նուիրատուութիւններուն եւ աջակցութեան շնորհիւ 2019-ը տարեշրջանի գործունէ-ութիւնը եղաւ յաջող եւ արդիւնաւետ:

- Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ պատուարժան հոգաբարձութեան՝ քաջալերանքին, ըն-



ծայած գիւրութիւններուն, եւ «X' Mas»-ի ճաշկերոյ-թին համար, ինչպէս նաեւ ՀՅԴ «Միհրան Փափազեան» կոմիտէութեան, որ կը քաջալերէ մեր գործունէութիւնը եւ զօրավիզ կը կանգնի միութեանս:

- «Հորիզոն» Շաբաթաթերթի խմբագրական կազ-մին, որ իր սիւնակներուն մէջ տեղ կու տայ մեր թղթակ-ցութիւններուն:

- Տէր եւ տիկին Սեւան Ստամպուլեաններուն, որոնք «Toi et Moi» հաստատութեան սեփականատէ-րերն են եւ սուրճ ով կը սատարեն մեր հաւաքոյթները:

- «Maestro» Արա Ալեքսանեանին, որ կը կազմա-կերպէ մեր ձեռնարկներուն գեղարուեստական յայտա-գիրները եւ կը մասնակցի նուագով:

- Տիկին Սիրվարդ Նշանեանին, որ ամէն տարեշր-ջանին սկիզբը կը պատրաստէ մեր անդամներուն վերա-նայուած եւ սրբագրուած անդամացանկը:

- Տիկին Սիլվա Նաճարեանին, որ միութեանս բոլոր ձեռնարկներուն մասին տեղեկութիւնները կը պատրաս-տէ եւ ե-նամակով կը փոխանցէ:

- Սիրայօժար եւ կամաւոր կերպով մեր 2019-ը տարեշրջանի ձեռնարկները ճոխացնող եւ խանդավա-ռող հետեւեալ անձերուն.-

- Պրն. Արթիւր Աբգարեան
- Պրն. Մարթին Եօրկանց
- Պրն. Աւօ Նիկողոսեան
- Պրն. Արա Ալեքսանեան
- Յակոբ Միլքոնեան
- Տիկ. Հիւտա Օդումուշեան
- Տիկ. Անիթա Աբանեան
- Տիկ. Ասողիկ Էսմերեան
- Տիկ. Լաուրա Պէրպէրեան

Անուշեղէններու վաճառքին իրենց կամաւոր մասնակցութիւնը բերող բոլոր անդամներուն եւ բարե-կամներուն:

Յատուկ շնորհակալութիւն մեր նուիրատունե-րուն, բոլոր անդամ անդամուհիներուն, բարեկամներուն եւ յանձնարումքերուն՝ իրենց ցուցաբերած աջակցու-թեան եւ սիրայօժար ծառայութեան համար, որոնց շնոր-հիւ 2019-ը տարեշրջանը եղաւ բարենպաստ տարի մը:

Յայտարարութիւն

- 2019 տարեշրջանին դժբախտաբար մեր վարչա-կաններէն մահացաւ՝ պրն. Արամ Նշանեանը, եւ այդ պատճառով իրեն փոխարինեց տիկ. Շուշան Փիլիկեանը, նաեւ վարչութեան միացաւ պրն. Լեւոն Նաճարեանը իբր օժանդակ:

- Վարչութիւնս իր տարեշրջանը աւարտած ըլլա-լով, այսու կու գայ իր հաւաքական հրաժարականը ներ-կայացնելու եւ յաջորդ տարեշրջանի վարչութեան կը մաղթէ յաջող գործունէութեամբ լի եւ փայլուն տա-րեշրջան մը:

Անի Գուլումճեան
Հմայեակ Ամէնճեան
Մարօ Կոստանեան
Գէորգ Տէմիրճեան
Լիւսի Ալեքսանեան
Իտա Գանոնճեան
Շուշան Փիլիկեան
Լեւոն Նաճարեան

Մարօ Կոստանեան

Ծովակալ Տիւ Ֆուռնէի Խիղճն Ու Մուսա Լերան Ժառանգորդները. մահուան 80-ամեակ

Փետրուար 16–ին կ’ամբողջանայ Մուսա Լերան հայութեան փրկարար ծովակալ Լուի Ռընէ Զարլ Մարի Տարթիժ Տիւ Ֆուռնէի մահուան 80–ամեակը։

Հայկական գաղթաշխարհի պատմութեան մէջ իր պանծալի տեղը գրաւած Մուսա Լերան զաւակները, դէմ կանգնելով Հայասպանին սադրանքներուն, նա–խընտրեցին ինքնապաշտպանութեան եւ ժողովուրդի գոյատեւման ուղին, որպէսզի այդ օրերու սեւ ու կար–միր էջերուն մէջ արձանագրուին նա’եւ փայլուն էջեր, յաղթանակի’ էջեր, թուրքին ծրագիրները ձախողու–թեան մատնող էջեր։ Այդ յաղթական սխրագործու–թիւններուն եւ օրհասական պահերուն մէջ իր ուրոյն տեղն ու դիրքորոշումը ունեցաւ նաեւ Ծովակալ Տիւ Ֆուռնէն։

Ան ծնած է 2 Մարտ 1856–ին, Յրանսայի Հիւսիս–Արեւմտեան Նորմանտիի Լ’Օռն շրջանի Փութանժ քա–ղաքին մէջ։ 1872 թուականին ընդունուած է Փրանսա–կան բանակի ծովուծի սպայական վարժարան եւ աւար–տած հազարապետի աստիճանով։ Միամի արշաւանքի ընթացքին ան եղած է «Լա Կոմէ» մարտանաւի հրա–մանատարը։ Իսկ 1893–ին, մասնակցած է Պանքոքի (Թալլանտ) ազատագրման մարտերուն։ Յետագային, Լուի Տարթիժ կը ստանցնէ «Փոթօ» մեծ ռազմանաւի հրամանատարութիւնը, ապա Հիւսիսային ծովի ֆրան–սական նաւատորմին մաս կազմող «Սուրքուֆ» մար–տանաւի հրամանատարութիւն։

1909–ին ան ենթածովակալ է։ Պալքանեան պա–տերազմի ժամանակ (1912–1913), ան կը ղեկավարէ Միջերկրական ծովի դաշնակից ուժերու նաւատորմը եւ փոխ–ծովակալի պաշտօն կը ստանայ։ 1915–ին կը ստանձնէ ֆրանսական նորաստեղծ երրորդ նաւատորմի հրամանատարութիւնը, նպատակ ունենալով ազատագ–րել թրքական տիրապետութեան տակ գտնուող Սուր–իայի ծովեզերեայ շրջանը։

1915–ի Սեպտեմբեր 10–ին, հայ ժողովուրդին դէմ գործադրուած Թուրքիոյ ցեղասպանական ոճիրին դէմ գէնք բարձրացուցած եւ Մուսա Լերան լանջերէն հաւաքաբար լերան գագաթը բարձրացած եւ անառիկ



ամբողջ հաստատած մուսալեռցիները 40 օր ինքնա–պաշտպանական մարտեր մղելէ ետք առանձին էին։ Փամփուշտն ու սնունդը հատնելու վրայ էր, իսկ ոսոխը՝ անընդհատ կը վերանորոգէր իր շարքերը՝ ինկողներուն տեղ նոր ուժեր կը հասցնէր եւ լեռն ի վեր յարձակումը անընդհատ կը շարունակէր։ Օգնութեան եւ փրկու–թեան միակ յոյսը Միջերկրական ծովն էր՝ ֆրանսական մարտանաւերը։ Դաշնակից ռազմանաւերու անձնա–կազմի օգնութիւն ստանալու յոյսով, Մուսա Լերան ինքնապաշտպանութեան ղեկավարները կանգնեցուցին սաւաններով պատրաստուած երկու դրօշ, որոնցմէ մէ–կուն վրայ գծագրուած էր կարմիր խաչը, իսկ միւսին վրայ անգլերէն գրութիւն մը՝ «Քրիստոնեաները վտանգուած են։ Օգնութիւն» բառերով։

Տիւ Ֆուռնէ տեղեակ ըլլալով իրավիճակի ծան–րութեան, անմիջապէս հեռագիր կ’ուղարկէ Յրանսա՝ ներկայացնելով կացութիւնը։ Յստակ պատասխան մը չստանալով, իր անձնական պատասխանատուութեամբ՝ իր պաշտօնը կորսնցնելու վտանգն իսկ յանձն առնելով, Սեպտեմբեր 12–ին, 4080 հայեր, «Jeanne d’Arc» – այլ ռազմանաւերով կը տեղափոխէ դէպի Եգիպտոսի Պոր Սաիտ նաւահանգիստը։

Պատմական իրադարձութիւնները հետեւեալ ձե–ւով կը զարգանան.–

Երրորդ նաւատորմի առաքելութեան ընթացքին, 5 Սեպտեմբեր 1915–ին, «Կիչեն» յածանաւը (Թշնամին լրտեսող մարտանաւ) Ռա էլ Մինայէն Մուսա Լերան բարձրունքին կը նշմարէ կարմիր խաչի դրօշ կանգնե–ցուցած խումբ մը մարդիկ։ Ծովակալ Ժան Ժոզէֆ Բրի–սոն նաւ մը կ’ուղարկէ «Հայերու ափ» կոչուող ծովե–զերքը եւ կապ կը հաստատէ հայ ղեկավար Փիէշ Տիմ–լաքեանին հետ։ Համաձայնութեան գալով, ծովակալ–ներ՝Տիւ Ֆուռնէն եւ Գաբրիէլ Տարիոսը կը միջամտեն ու խիզախ որոշումը կ’առնեն Կիպրոս տեղափոխելու հայերը, սակայն անգլիական ղեկավարութեան ժխտա–կան տրամագրութեան հետեւանքով Եգիպտոսի Սաիտ նաւահանգիստ կը հասցնեն գաղթականները։

Միայն երեք ամիս յետոյ Տիւ Ֆուռնէ հեռագրով մը պատասխան կը ստանայ Յրանսայէն, թէ՛ «Ու՞ր կը գտնուի Մուսա Լեռը»։ Այսպիսով, եթէ Տիւ Ֆուռնէն չանսար իր խղճի ձայնին, Մուսա Լերան ժառանգորդ–ները այսօր գոյութիւն չէին ունենար։

1916–ի Դեկտեմբերին ան իր գինուորական պաշ–տօնը կը կորսնցնէ եւ կ’ամուսնանայ այրի կնոջ մը հետ։ Կը հրատարակէ քանի մը յուշագրութիւններ, որոնցմէ մէկը՝ «Ծովակալի մը Պատերազմական Յիշա–տակները» (Փարիզ, 1920), որուն մէջ ամբողջ գլուխ մը նուիրած է Մուսա Լերան հերոսամարտին եւ հայերու փրկութեան մանրամասնութիւններուն։

Մահացած է Յրանսաի Տորոոյն շրջանի Փերիկէօ քաղաքի մէջ, 16 Փետրուար 1940–ին։

Քրիստափոր Միքայէլեան

ՀՀ Ազգային ժողովի որոշումը Սահմանադրական դատարանի դատաւորական կազմը հանրաքուէով գործէ արձակելու

Սահմանադրական

Սահմանադրական իրաւունքի բնագաւառին մէջ, հիմնական նորմ է երեք տարանջատ իշխանութիւննե–րու փոխ–յարաբերութեանց կայունութեան պահպա–նումը։ Եւ այդ կայունութեան երաշխաւորը Սահմա–նադրական Դատարանն է, որուն որոշումները անվե–րաքննելի են։

Ժողովրդավարական համակարգը պարտագիր կը դարձնէ, որ երկրի օրէնսդիր եւ գործադիր իշխանու–թիւնները գործեն իրենց սահմանադրական իրաւասու–թիւններու նախատեսուած սահմաններուն մէջ։ Անոնք հարկադրուած են յարգելու երրորդ իշխանութեան, այ–սինքն դատակա’ն իշխանութեան անկախութիւնը։ Եւ հետ’’ւաբար՝ պարտաւորուած են ընդունելու դատական համակարգի տնօրինումները ԱՌԱՆՅ ԴՈՅՁԼ ԻՍԿ ԱՌԱՐԿՈՒԹԵԱՆ։ Ո՛Ձ ՎԱՐԶԱՊԵՏԸ, Ո՛Ձ ԿԱՌԱ–ՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԻԻՍ ԱՆ ԴԱՄՆԵՐԸ, Ո՛Ձ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՒ Ո՛Ձ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԵՐԷՆ ՈՐԵԻՒ ՄԷԿԸ ԱՐՏՕՆՈՒԱԾ Է ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇՏԸ ԽՈՌՎԱՐԿԵԼՈՒ ՀՀ ԴԱՏԱ–ԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՆ ԵՒ ԴԱՏԱ–ԻՈՐՆԵՐՈՒ ԱՆՁԱՆՅ ԴԷՄ։ ՆՄԱՆՕՐԻՆԱԿ ՈՐԵԻՒ ՔԱՅԼ ՔՐԷԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹԻՒՆ Է ՀՀ ՍԱՀՄԱ–ՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԵՒ ՊԷՏՔ Է ԸԼԼԱՅ ԽՍՕՐԷՆ ՊԱՏՇԵԼԻ։

Իսկ օրէնսդիր եւ գործադիր իշխանութեանց որո–շումներու եւ պահուածքի (conduct) սահմանադրակա–նութիւնը հաստատող միակ իրաւասու ատեանը ՀՀ Սահմանադրական Դատարանն է, որուն վրայ որեւէ գերիշխանութիւն չունին չեն կրնար ունենալ օրէնս–դիր եւ գործադիր իշխանութեանց իշխանաւորները։ Եթէ դատական համակարգի գործիչներէն ոեւէ մէկը

մեղաւոր է փտախտով եւ զեղծարարութեամբ (ինչպէս մեծահագազ կը պնդեն ներկայ իշխանութեան համա–կիրներն ու ջատագովները), այդ ամբաստանութիւնը պէտք է մանրամասնօրէն հիմնաւորուի պետութեան համապատասխան ծառայութիւններուն կողմէ եւ հարցը լուծում գտնէ ՀՀ Սահմանադրութեան նախատեսած գործընթացներով միայն։ Եւ ոչ ոք իրաւունք ունի այդ գործընթացները աղմկարարութեամբ նախապաշարելու։ ԴԱՐՁԵԱԼ՝ ՆՄԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՒՆ ԸՍԵԼԻՔ ՁՈՒ–ՆԻՆ ՕՐԷՆՍԴԻՐ ԵՒ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇՏԱՆՈՒԹԻՒՆՆԵ–ՐԸ ԵՒ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ՝ ՊՐ. ՎԱՐԶԱՊԵՏԸ ԴՆՔ։ ԲԱՅՑ ՈՒՆԻՆ ԸՆԵԼԻՔ։ ԱՆՈՆՔ ԱՄԷՆ ԱՆՀՐԱժԵՇՏ ՔԱՅԼ ՊԻՏԻ ԱՌՆԵՆ, ՈՐՊԷՍՁԻ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆ–ԹԱՅԸ ՊԱՀՈՒԻ ԽԱՂԱՂ ԵՒ ԱՆԽԱԹԱՐ ՄԹՆՈԼՈՐ–ՏԻ ՄԷՋ ԵՒ ՀԵՌՈՒ՝ ՈՐԵԻՒ ԱՄՐՈՒԱՎԱՐՈՒԹԵՆԷ։

Այս բոլորէն կը հետեւի, որ ՀՀ Ազգային ժողովի որոշումը ՀՀ Սահմանադրական Դատարանի դատաւո–րական կազմը հանրաքուէով լուծարելու յարիր չէ ՀՀ Սահմանադրութեան սկզբունքներու էութեան։ Ան յստակօրէն կը ցույցնէ քաղաքական մեծամասնութեան նեղ օրակարգը եւ երկրի սահմանադրական գործընթացը կը քաղաքականացնէ։ Առաւել եւս անընդունելի՝ որ այդ քաղաքականացումը տեղի կ’ունենայ մեծամաս–նութեան ուժի չարաշահումով եւ առանց համազգային խորհրդակցութեան։ Որոշումը նաեւ կը խախտէ հիմնա–կան օրինականութիւն մը։ Եթէ «մեղքեր» կան գործ–ուած, այդ մեղքերուն հետ աւընչուող մեղադրանքները եւ յետին մանրամասնութեամբ – պէտք է ուղղուած ըլ–լան իւրաքանչիւր ԱՆՀԱՏ դատաւորի, մինչդեռ որո–շումը «կը լուայ բոլորն ալ նոյն ջուրով»...Եւ մանա–ւանդ ան ոտնակոխ կ’ընէ իւրաքանչիւր դատաւորի

անմեղութեան կանխավարկածը։ Դատաւորական այս կազմի դատաւորներէն ամէն մէկը – ներառեալ՝ Սահ–մանադրական Դատարանի ներկայ Նախագահը – Ան–ՄԵՂ է մինչեւ որ ՀՀ Սահմանադրութեան նախատեսած գործընթացով ապացուցուի անոնցմէ ամէն մէկուն կարծեցեալ մեղքը։ Ո՞ւր է Մարդու Իրաւունքներու Պաշտպանը։ Եւ ո՞ւր կը մնայ Մեծարգոյ Պր. Վարչա–պետին հաւաստիացումը, թէ իր իշխանութեան օրով մարդու իրաւունքները տառացիօրէն պիտի յարգուին...

Ես տակաւին ըստ էութեան չխօսեցայ ՀՀ Սահմա–նադրական Դատարանին դէմ շղթայագերծուած այս խաչակրութեան մասին։ Այդ մէկը՝ ուրիշ առթիւ։ Մէկ բան կ’ուզեմ յանձնել բոլորին ուշադրութեան։ Պատկե–րացուցէ՛ք, որ ամէն նոր իշխանութիւն, որ այս կամ այն ձ’ւով խորհրդարանական մեծամասնութիւն կը ձեւաւո–րէ եւ կը յայտնուի պետութեան ղեկավար դիրքերուն վրայ, ինքզինքին իրաւունքը տայ նոր հանրաքուէի միջոցով Սահմանադրական Դատարան փոխելու...Այ–սինքն՝ փոխելու այն իսկ մարմինը, որ յանուն հանրու–թեան պարտականութիւնը ունի իր վրայ հսկե–լու...Խնդրեմ ըսէք, թէ իսկապէս ի՞նչ կ’ըստացուի այս ընթացքով։ Ըսէք, թէ ինչպիսի՞ ծաղրանկարի կը վերա–ծենք մեր երկրի տնօրէն օրէնքը, օրէնքներու օրէնքը, մեր ազգային միասնականութիւնը օրինադրող միակ փաստաղուղթը, մեր հաւաքական ինքնութեան վկա’ն։ Վերջ տուէք, տիկնայք եւ պարոնայք։ Վերջ տուէք այս երթուղարձին։ Եւ կամ ըսէք հանրութեան, որ ի վիճակի չէք այս երկիրը իր սահմանադրութեամբ կառավարելու։

Կարօ Արմենեան

ARF of Armenia urges voters to ‘ignore’ April 5 referendum

YEREVAN—The Armenian Revolutionary Federation Supreme Council of Armenia, in an statement issued on February 12, is urging voters to ignore the Constitutional Court referendum slated to take place on April 5.

Below is the translated text of the announcement:

It is with great regret that we verify that the current political leadership, by ignoring numerous pleas and warnings, is pulling the country into reckless risk.

By exploiting and distorting one of the important tenets of a democracy—the referendum—the authorities, in veiled effort, are advancing their singular goal to establish an autocracy and their inability to neutralize the threats facing the country.

By condemning the political leadership’s approach of creating artificial plans through demagogic methods, we are sounding an alarm for this unconstitutional approach. The ARF Supreme Council of Armenia announces that the leadership’s approach of addressing issues through unlawful means is unacceptable.

As such, We call on the citizens of the Republic of Armenia to not become participant to the authorities’ routine unlawfulness and ignore the April 5 referendum, thus sending a clear message to the authorities that the people are tired of the populism and contriving plans, the destructive policy of dividing the society into “whites” and “blacks,” and the continued upheavals which, as we have seen, have not benefitted the welfare of the people and true democracy.

We call on political forces, civil society—our compatriots—urging them to put their efforts together to prevent a “Yes” vote and thwart this anti-state process and finally start implementing real reforms. The ARF will use all necessary means to this end.

Pashinyan, Merkel meet

MERKEL CALLS FOR COLLABORATION WITH VENICE COMMISSION

BERLIN—Armenian Prime Minister Nikol Pashinyan met with German Chancellor Angela Merkel on February 13 in Berlin, where he was to attend an international security conference the next day. The German leader praised the strengthening relations between the two countries and welcomed democratic reforms in Armenia, calling on Yerevan to collaborate with the Council of Europe’s Venice Commission when advancing the judicial reform agenda.

“There is a parliamentary democracy in Armenia,” said Merkel during a press conference ahead of her talks with the Armenian leader. “Elections have been held and there is also a major reform process, which hopefully will be through collaboration with the Venice Commission, for example, as it relates to legal system.”

An Armenian government statement issued following the meeting with Merkel said the Pashinyan discussed the ongoing reform agenda and briefed the German leader on the upcoming April 5 referendum, which is aimed at removing Constitutional Court justices. Pashinyan’s press office, in reporting about the meeting or the preceding press conference made no mention of Merkel’s suggestion to engage the Venice Commission in legal system reforms.

At the press conference, Pashinyan praised Germany for its decisive role as “bridge” between Armenia and the Euro-

pean Union, the European civilization and culture.

Pashinyan emphasized the Germany’s assistance in Armenia’s reform process and expressed gratitude to Germany and the EU for the moral, political, and financial support. “It is of key importance for ensuring the irreversibility of democracy in our country,” he said.

“We are extremely interested in the welcoming German companies to Armenia. I have to state with satisfaction that after our meeting last year we have made tangible progress on almost all the agreements. We are very happy for the agreement with KfW Bank to establish a TUMO center in Berlin. It’s a great honor for us to share our experience with a technological giant like Germany,” said Pashinyan.

In her remarks at the press conference, Merkel fondly recalled her visit to Armenia and emphasized that she was impressed by her visit to TUMO center, the result of which is that in autumn a TUMO center will open in Berlin.

Merkel also highlighted the Armenian peacekeeping mission in Afghanistan and thanked Pashinyan for his government’s assistance in that NATO-led initiative. She also addressed the ongoing efforts for the settlement of the Karabakh conflict. to Armenian-Azerbaijani relations and added that she will continue the meeting

Continued on page E2

Syria’s Parliament recognizes Armenian Genocide

DAMASCUS—The Parliament of Syria on February 13 voted unanimously to recognize and condemn the Armenian Genocide.

The resolution was introduced by the Syria-Armenia Parliamentary Friendship Commission. Parliament Speaker Rami Saleh said that while the parliament had previously commemorated the victims of the Armenian Genocide, the resolution needed to be adopted.

Turkey was quick to condemn Thursday’s vote, calling it “hypocrisy.”

“This is a picture of hypocrisy on the part of a regime which has for years committed any kind of massacre on its own people... which has displaced millions and which is well known for its use of chemical weapons,” the foreign ministry says in a statement.

Syria’s Ambassador to Armenia Mohammad Haj Ibrahim attached importance to the recognition of the Armenian Genocide, saying that the successors of those who committed the Genocide are committing the same crime today against the Syrian people through terrorists.

“Recognition is important, because only Lebanon from Arab countries has recognized the Armenian Genocide so far,” he said.

“Today’s terrorist organizations, who are committing horrifying acts against the Syrian people, are the grandchildren of those who committed genocide against the Armenians and others in the past,” said Ibrahim during a press conference in Yerevan.

“When during the Armenian Genocide the Armenians reached Syria, they became an integral part of the Syrian society, they safely resumed their life in Syria — preserving their identity, religion, studying in Armenian

schools. There are numerous churches which are eternalizing the memory of the victims of the Armenian Genocide, most importantly the Armenian Genocide Memorial Church in Deir ez-Zor, the Forty Martyrs’ Church in Aleppo, as well as the Holy Martyrs of Armenian Genocide square in Damascus,” added Ibrahim.

Speaking about the Syrian parliament’s unanimous adoption of the Armenian Genocide resolution, the Ambassador said that Syria has always commemorated the memory of the victims of the massacres against the Armenians.

“This issue has been studied long time ago, and the Syrian Government has treated with utmost respect the Syrians who have Armenian roots. They have always been an integral part of the Syrian society. The Armenian pogroms have always been commemorated in Syria, through the events held in the Armenian-populated regions,” explained Ibrahim.

Chair of the Syrian Parliament’s Arab and Foreign Affairs Committee Boutros Morjana emphasized that the Armenian Genocide is a historical fact, which was followed by the massacres of Assyrians and Arameans in northern Syria.

“It is time to recognize and condemn these inhumane actions and prevent their repetition, especially that many countries have recognized the Armenian Genocide,” said Morjana.

The adoption of the resolution recognizing and condemning the Armenian Genocide by the People’s Council of Syria is clear evidence of the centuries-old friendship between the Armenian and Syrian peoples. It’s an important contribution to the restoration of historical justice and prevention of genocides, said a statement issued by Armenia’s Foreign Ministry.

‘Monster Zeki’: Armenian diplomat reveals mystery of Genocide perpetrator

BY NORAYR SHOGHIKYAN

YEREVAN—Salih Zeki (Kusharkov), the most brutal among the organizers of the Armenian Genocide, has been lying in the shadows of history for decades., the most brutal among the organizers of the Armenian Genocide, has been lying in the shadows of history for decades.

Arsen Avagyan, head of the Department of Bordering Countries at the Foreign Ministry of Armenia, Doctor of Historical Sciences, and professor at Yerevan State University, recently spoke to Armenpress about his study of the Ottoman, Russian, and Georgian archives, as well as his discovery of the mystery of Monster Zeki.

“Salih Zeki was born in 1883 in the city of Samsun, and was a Circassian by nationality. His father migrated to the Ottoman Empire in 1864 during the major emigration of Circassians from the Kuban region of Northern Caucasus,” said Avagyan. “In the Armenian sources, or in all memoirs relating to the Genocide or the events of that time, the name Salih Zeki is referred to as the ‘Monster Zeki.’ He first held a position in Everek in 1915 and, later, was the governor of Deir ez-Zor, which had the largest concentration camp. According to various reports, Salih Zeki organized the extermination of nearly 200,000 Armenians. The problem with Zeki is that there is minimal information about his life prior to, and following, the genocide. When we look at the sources, it seems he appeared in 1915, and disappeared after 1916,” he added.

Although Avagyan found information about Zeki through

Les personnes intéressées peuvent envoyer leur candidature à l'adresse courriel eglise@sourphagop.net, au plus tard le 28 février 2020. Le courriel doit inclure un CV accompagné d'une lettre de présentation.

Seuls les candidats choisis seront contactés.

MENACES...

suite de la page F1

Marukian, durant la séance de questions au gouvernement à l'Assemblée nationale. Il a notamment affirmé que le responsable de l'opposition se permettait de défier l'actuel gouvernement car il était sûr qu'il n'aurait jamais recours à la violence. N.Pachinian a aussi déclaré: «J'ai laissé entendre [le 6 février] que si la décision relative à la tenue de ce referendum était défiée par la Cour constitutionnelle nous agirions en conséquence. Pourquoi? Parce que nous disons, 'Demandons donc au peuple et laissons s'exprimer librement la volonté Populaire!'».

«S'il y a une force qui dit 'Non, je ne veux consulter le peuple, et préfère consulter la Cour constitutionnelle,' il faudra en tirer une certaine conclusion, spécialement dans ce contexte», a ajouté le premier ministre. Le LHK et l'autre parti d'opposition parlementaire, Arménie prospère (BHK), peuvent encore empêcher la tenue du referendum constitutionnel du 5 avril, si toutefois leurs députés en appellent à la Cour constitutionnelle et en convainquent les membres de déclarer inconstitutionnels les amendements que le gouvernement veut soumettre au peuple. De tels appels doivent avoir les signatures d'au moins 27 des 132 membres du Parlement. Le BHK et le LHK ont respectivement 26 et 17 sièges dans l'actuel Parlement. E.Marukian avait réaffirmé la veille que son parti était disposé à contester le référendum devant la

cour. Le leader du BHK Gagik Tsarukian a fait savoir, de son côté, que les députés de sa formation ne s'engageraient pas sur cette voie.

N.Pachinian a aussi affirmé que la campagne pour le referendum stimulerait l'activité économique en Arménie en restaurant la «confiance dans l'avenir «des citoyens. Il a aussi affirmé que «nombre» d'arméniens résidant à l'étranger suivraient son appel et feraient le voyage en Arménie pour voter et chasser les juges de la plus haute cour du pays. «Il semble que nous sommes en train de créer un nouveau type de tourisme que l'on appellera le tourisme électoral», a ajouté Pachinian, qui a sans doute pris la mesure de la participation très faible qui a marqué les derniers scrutins, y compris celui de décembre 2018 qui l'avait porté officiellement à la tête du pays. Alors que le vaste mouvement de retour au pays qu'il avait annoncé au lendemain même de sa révolution de velours se fait attendre, la population de l'Arménie continuant à décliner.

Plusieurs de ses opposants ont vu dans cet appel le signe d'un malaise au sein de l'équipe de Pachinian, qui craindrait de ne pas obtenir le plébiscite annoncé au referendum sur les changements constitutionnels. Pour être adoptés, les amendements doivent être approuvés par la majorité des électeurs participant au referendum, soit au moins un quart des 2,57 millions d'électeurs enregistrés dans le pays.

(Armenews)

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Անփոփոխելի՞ն եւ փոփոխելի՞ն

Իրենց ծառայած հաւաքականութիւններու իրա-վիճակներուն եւ կարիքներուն լոյսին տակ կուսակ-ցութիւնները պարբերաբար կը վերանային իրենց ծրագիրն ու կանոնագիրը՝ պատշաճելու համար կեանքի նոր կացութիւններուն ու պահանջներուն կամ... իրենց հաշիւը կը փակեն պատմութեան հետ։ Այդ հաշուեփակը կրնայ մէկ օրէն միւսը ըլլալ կամ երկար ժամանակի վրայ տարածուիլ, բայց ի վերջոյ անխուսափելի կը դառնայ։

Միայն բռնապետական կարգերու տակ իրերը իրենց բնական ընթացքը չեն ունենար, արուեստա-կանօրէն կ'երկարի միահեծան իշխող կուսակցութիւն-ներու կեանքը, սակայն անոնք եւս օր մը կ'անհետա-նան պատմութեան բեմէն, ընդհանրապէս բռնի ու-ժով։

Այդպէս է եղած բոլոր ազգերու պարագային, այդպէս է եղած նաեւ մեր պարագային, եւ եթէ աչք մը նետենք միայն մեր վերջին երեսնամեակի՝ վերան-կախացած Հայաստանի անցած ուղիին վրայ, չենք կրնար չտեսնել, թէ ինչպէս մէկը միւսին ետեւէն ալ քաշ-ուեցան հրապարակէն։ Ապագայ պատմաբանը կրնայ որոնել այդ երեւոյթին պատճառները, վերլուծել ու դասեր քաղել անկէ, սակայն ինծի կը թուի, թէ այն-քան ալ դժուար չէ բնորոշել այդ պատճառներէն ոմանք, ինչպէս՝ ժողովուրդի կարիքներէն ու անմի-ջական մտահոգութիւններէն խզուիլը, օտար՝ արտա-քին ուժերու կողմէ խրախուսուած ու մէջտեղ եկած ըլլալը, անհատներու քմահաճոյքներուն ու փառա-տենչութիւններուն շուրջ յառաջացած ըլլալը եւ այլն։

Այլոց նման Չ.Յ.Դաշնակցութիւնն ալ պարտա-ւորութիւնը ունի ինքնաքննութիւն կատարելու պար-բերաբար եւ վերանայելու իր ծրագիրը, կանոնագիրն ու ռազմավարութիւնը։ Իւրաքանչիւր Ընդհանուր ժողով օրակարգի վրայ ունի ռազմավարութեա'ն քննարկումը, իսկ ժամանակ առ ժամանակ գումա-րուող արտակարգ ժողովները՝ ծրագրի ու կանոնագրի վերամշակումը՝ օրուան հրամայականներուն ընդա-ռաջ։

Սոյն յօդուածին նպատակն է սեղանի վրայ դնել այն սկզբունքներն ու տրամադրութիւնները, որոնք չե'ն կրնար փոփոխութեան ենթարկուիլ, իսկ եթէ ենթարկուին կրնան դիմափոխ ընել կուսակցու-թիւնը, նոյնիսկ ա'յն աստիճան դիմափոխ, որ ճիգը դառնայ անհեթեթ, ու նախընտրելի ըլլայ ստեղծել նոր կուսակցութիւն մը փոխանակ եղածը փոխելու։

Արդ, ո՞րն է այն առաջին ու հիմնական, անսա-սանելի սկզբունքը, որ առանքցը կը կազմէ այս կու-

սակցութեան գոյութեան՝ ահա 130 տարիէ ի վեր։

Այդ՝ անձնագոհութեան երեւոյթն է, այն երեւոյթը, զոր որքա'ն կուռ կերպով բանաձեւեր է մեր մեծ տեսաբա-նը՝ Նաւասարդեան Վահանը։ Ի՞նչ կ'ըսէ ան « Գաղա-փարների ոգին» (1951, Գահիրէ) իր հատորի ներածականին մէջ։

«Վաթսուռ տարիներ առաջ գաղափարական մի հզօր կիրք մաիւր հազարաւորների համար հոգեկան վայելք դարձրեց։

Ու ծայր տուաւ Յօժարների մի հանդիսաւոր երթ դէպի Գոդգոթա, յօժար ոչ միայն հոգիով, այլ եւ մարմնով։

Յեղայի՛...

Այս մէկ հատիկ բառը պատռեց դարերի խաւարը ու հիմից փոխեց մեր կեանքի պատկերը»։

Դաշնակցութեան կանոնագիրը կը բխի այս նուիրումի յօժարականութենէն։ Կանոնագիր չկա'ր, երբ սկսաւ Յօժարներու այդ երթը։ Կանոնագիրը հաստատուեցաւ յե-տոյ՝ ա'յդ ոգիով ու ըմբռնումով։

Դաշնակցականէն պահանջուած երդումն ալ նուիրակնացումն է այդ երթին.

«Կ'երդնում պատուոյս եւ հայրենիքիս վրայ՝ միշտ հաւատարիմ մնալ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Ծրագրին, Կանոնագրին եւ որոշումներուն եւ բոլոր ուժե-րովս,— իսկ եթէ հարկ ըլլայ՝ նաեւ կեանքիս գնով,— ծա-ռայել Հայաստանի եւ հայութեան ազատագրութեան դա-տին»։

Կանոնագրի մնացած պահանջներէն շատերը հիմն-ուած են այս երդումով ստանձնուած յանձնառութեան վրայ։ Երդումը ինքը յստակ կը դնէ պարտաւորութիւն-ները.

- Հաւատարիմ ըլլալ Դաշնակցութեան ծրագրին
- Հաւատարիմ ըլլալ Դաշնակցութեան կանոնագրին
- Հաւատարիմ ըլլալ Դաշնակցութեան որոշումնե-րուն

Առանց այս երեք հաւատարմութիւններուն,— զու-գահե'ռ, նոյնաժամանակեա'յ հաւատարմութիւններուն,— կարելի չէ դաշնակցական ըլլալ։ Ընդունելով այդ երեքէն մէկը կամ երկուքը բայց ոչ երեքը միասին՝ կրնաս ըլլալ համակիր, կրնաս ըլլալ գործակից, բայց չես կրնար ըլլալ կուսակցական դաշնակցական։ Այո', շատերս կը դաւա-նինք մենք մեզ որպէս դաշնակցական, «սրտով» կամ «հոգիով» դաշնակցական, ինչ որ փաստ է նաեւ, որ Դաշ-նակցութիւնը միայն կուսակցութիւն չէ, ան է՝ նաեւ դա-դափարական էութիւն, չարժո'ւմ եւ ոգի՝, սակայն, ինչպէս դիտել կու տայ Նիկոլ Աղբալեան*, առանց կանոնագրա-յին այս տրամադրութիւններուն ենթարկուելու կարելի չէ կուսակցական ըլլալ։

Կայ աւելին ալ այդ երդումին մէջ.

– Բոլո'ր ուժերովս...

- Իսկ եթէ հարկ ըլլայ՝ նաեւ կեանքիս գնով
- Ծառայել Հայաստանի եւ հայութեան ազա-տագրութեան դատին

Սա նոյնն է, ինչ որ Վահան Նաւասարդեան կը նշէ որպէս «յօժարների մի հանդիսաւոր երթ դէպի Գոդ-գոթա»։

Կը կարծուէր, թէ անցա'ծ են կեանքը նուիրաբե-րելու օրերը։ Պատմութիւնը ցոյց տուաւ, թէ չե'ն ան-ցած։ Արցախի ճակատը՝ վկա'յ։ Իցի'ւ թէ հասնինք հոն, աշխարհը վերածուի մեր երազած դրախտին։ Մի'նչ այդ սակայն տակաւին մեզմէ կրնայ պահանջուիլ այդ նուիրաքերումը։

«Բոլո'ր ուժերովս»․ այս երկու բառերը կը բու-վանդակեն դաշնակցականին ամբո'ղջ յանձնառու-թիւնը, ամբողջակա'ն յանձնառութիւնը, որ չի սահմա-նափակուէր ժողովներու ներկայութեամբ ու անդա-մավճարի կատարումով, ձեռնարկներու մասնակցու-թեամբ ու իրեն վստահուած աշխատանքներու յանձան-ձումով։

Անձնական տենչեր, անձնական նպատակներ ու անձնական գործեր կը ստանան երկրորդական կարեւո-րութիւն հաւաքական տենչերուն, նպատակներուն ու գործերուն դէմ–յանդիման։ Հայաստանի եւ հայութեան ազատագրութեան դատը անձնականէն առաջ կու դայ։ Այդպէ'ս է եղած անցեալին, այդպէս է, պէ'տք է ըլլայ եւ այսօր։ Սուրբ պսակի գիշերն իսկ ճակատ մեկնողներ կային այն ատեն, կան եւ այսօր։

Իսկ ճակատները միայն թշնամիին դիմաց չեն յարդարուած։ Ծակատներ կան կեանքի բոլոր ոլորտնե-րուն մէջ, ճակատներ, որոնց վրայ պիտի գտնուին դաշ-նակցականները ամենուրեք, ճակատներ՝ ինքնութեան պաշտպանութեան, մեր գոյութեան սպառնացող բոլոր իրա-վիճակներուն դէմ–յանդիման։ Հայաստանի եւ հայու-թեան ազատագրութիւնը այդ բոլոր ճակատներուն վրայ կը պատահի։ Հայաստանի հզօրացումը, տնտեսա-կան ամրակայումը նոյնպէս այդ ազատագրական պայ-քարին տարրեր երեսներն են։

Կազմական կանոններուն, այսինքն Կանոնագրի այլ յօդուածներէն անփոփոխելի կը մնան նաեւ անոնք, որոնք մեր ժողովրդավարական կեցուածքները, ինչպէս օրինակ հարցերու քննարկումն ու բանաձեւումը կա-տարելը վարէն վեր՝ ամենէն հիմնական մակարդակնե-րէն՝ խումբերէն կամ ընկերական ընդհանուր ժողովնե-րէն դէպի Շրջանային եւ հուսկ՝ Ընդհանուր ժողովները, իւրաքանչիւր ընկերոջ ձայնի՝ մէկ ձայնի իրաւունքը, այդ ձայնը արժեւորելու պարտաւորութի'ւնը։

Անփոփոխելի՞ն... Ծար. էջ 9

 CIBC Aline Shnorhokian Mortgage Advisor Tel: 1 866 231-8876 Fax: 450 688-7555 Cell: 514 797-1375 aline.shnorhokian@cibc.com	 Sutton REALTOR INC. ALBERT ARKILANIAN (Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker) aarkilanian@sutton.com Cell: 514.962.8822 Bur: 514.426.9595 Fax: 514.426.9596 *certaines conditions s'appliquent	 HONDA HONDA GABRIEL 7000, boul. Henri-Bourassa Est Montréal-Nord, QC H1G 6C4 www.hondagabriel.com	Tro Bachekjian Représentant des ventes Véhicules d'occasion Pre-owned Sales Consultant tbachekjian@gabriel.ca Tél. : 514 327-7777 Poste : 4139 Téléc. : 514 262-8019 CONCESSIONNAIRE DE QUALITÉ
 École De Conduite AZIG Driving School Tel: 514-336-1110 Moniteur-Instructeur AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM 1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Instruction Automatique ou manuelle Suite 1438 Centre Adonis II	 Personal & Corporate Tax Returns Financial Statements Bookkeeping Business Plan NATALIE SKAFF, CPA, CGA Comptable Professionnelle Agréée Chartered Professional Accountant nat.skaff@gmail.com Tel. (514) 963 3363 2866 Rue De Chamonix Saint-Laurent, Québec H4R 3B7	 BRING YOUR OWN WINE NAZARETH CLASSIC GRILL	550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6 Tel: 450.937.4064 Email: resto.nazareth@hotmail.com
SAMUEL TOPALIAN 450 682-1644 AUTO SAMSON MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE SERVICE DE PNEUS MISE AU POINT 4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.	 ՀԱՅԿ ԽԱՐՏՈՒՆԻԱՆ Hayk Hartounian Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker C 514.574.6162 B 514.333.3000	 NETTOYEUR MARIE-CLAIRE CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL) 2535 de Salaberry, Montréal Tél: 514.334.7830	

Աստղիկ Հաճեանի յիշատակին

Մօրս նկարագրային գիծերը թուե-
լու համար, անկեղծօրէն կրնամ ըսել, որ
դժուարութիւն չունեցայ: Մայրս ազնիւ,
աշխատասէր, ժպտադէմ, կատակասէր,
չափազանց կոկիկ եւ բժախնդիր, ստեղ-
ծագործ, ծառայասէր, լուռ, տնտեսագէտ
եւ հայրենասէր անձ մըն էր: Սակայն
այս բոլորին ետին միշտ հարց կուտամ,
թէ ո՞րկէ եւ ինչպէ՞ս այս նկարագիրը
թրծուած էր եւ խտացած իր անձնաւո-
րութեան մէջ: Թերեւս բազմանգամ ըն-
տանիքի զաւակ ըլլա՞լը, արդեօ՞ք կա-
նուխ տարիքին որբացածի իր ծանր փոր-
ձառութիւնը, աւելի ուշ հայ ընտանիքի
մը մայր ըլլալու մղու՞մը թէ ընդհան-
րապէս իր շրջանակը կազմող ընկերու-
թիւնը: Այսօր փորձ մը ուզեցի ընել,
լուծելու համար այս թնճկախաղը:

Եթէ մայրս համեստ էր, ազնիւ,
ծառայասէր եւ մանաւանդ լուռ՝ իր
նշանաբանով «Ես լուութեամբ կը յաղ-
թեմ աղջիկս», ապա այս արժանիքները
արմատացած էին իր մանկութեան տարի-
ներէն: Չեմ ուզեր խղճալի դարձնել իր
մանկութիւնը, բայց դրուագ մը անընդ-
հատ կ'անհագստացնէր պատանի հոգիս,
երբ ամէն անգամ ուզէի որ ինծի բան մը
պատմէր, առաջին պատկերը իր մանկու-
թենէն կու գար:

Հալէպի Հայկազեան դպրոցէն
Ազիզիէի թաղերու ճամբով իր տուն վե-
րադարձին, կը շնչէր ճաշի անոյշ բուր-
մունքը, որ տակաւին չվայելած, կը յիշէր
ընտանիքին համար իրեն վերապահուած
ճաշ պատրաստելու պարտականու-
թիւնը: Հայրը Սասունցի էր, բնականա-
բար փռապան: Բարեբախտաբար փուռի
բարիքներէն ալ բաժին մը կը մխիթարէր
պատանի մօրս եւ ինծի՝ այս տխուր
պատմութիւնը մտիկ ընողին: Մայրս,
կիթ ուրիշ ըսելիք չունենար իր անցեա-
լէն, ուրեմն մեր խնդրանքով պատմու-

թիւն մը կը պատմէր: Կը սկսէր, Յովհան-
նէս Թումանեանի «Գիգորը», եւ արդէն
այս ուղղութեամբ այլեւս ոչ մէկ մեկնա-
բանութիւն:

Հօրս՝ Յարութիւն Հաճեանի հետ
ընտանիք կը կազմէ եւ կը բախտաւորուի
երեք զաւակներով: Այս շրջանին կը
շեշտուին մօրս շրջախոհ, լաւատէս, չա-
փազանց կոկիկ եւ տնտեսագէտ ըլլալու
նկարագիրը: Աշխատասէր եւ հեռատես
մայրս, հօրս կողքին իր ընտանիքը կը
պահէ ապահով եւ բարեկեցիկ պայման-
ներու մէջ: Հիւսքի եւ ձեւագիտութեան
վարպետ էր: Կոկիկ ու նրբաճաշակ մեր
հագուստները պատրաստ կ'ըլլային Ս.
Ջատիկէն մէկ շաբաթ առաջ: Մայրս
նուազագոյն կարելիութիւններով կը
ստեղծագործէր: Իրեն համար հարստու-
թիւնը նիւթականին մէջ չէր, այլ՝ քիչով
շատը ցոյց տալու հմտութեան:

Հօրս ճանչցողները քաջ պիտի
վկայեն թէ ուրկէ կու գար մօրս կատա-
կասէր եւ համարձակ դառնալու գիծերը:
Հայրս չափազանց զուարճախօս եւ չէն
նկարագրի տէր մարդ էր: Մօրս յաճա-
խակի զսպումները ապարդիւն կը դառ-
նային մեղմացնելու անոր պերճախօսու-
թիւնը, հետեւաբար, պէտք էր յարմարէր
եւ կատակ մըն ալ ինք աւելցնէր: Հօրս
քաջալերանքով մայրս կ'անդամակցի
ՍՕԽ-ին: Ինքնութեան կերտումի նոր
աշխարհ մը կը բացուի իր դիմաց: Կա-
մաւոր աշխատանքը կը թրծէ անոր
միտքն ու հոգին ու կը դառնայ աւելի
համարձակ եւ ինքնավստահ: ՍՕԽ-ի
գործունէութեան հազիւ ծանօթացած՝ կը
ստանձնէ մասնաճիւղի խմբապետուհիի
պաշտօնը, իսկ աւելի ուշ կը դառնայ
«Անի» մասնաճիւղի վարչական եւ Ազ-
գային պատասպարանի խնամատար
մարմնի ներկայացուցիչ: Որպէս վարչա-
կան կապ եւ Արծուիկ խորհուրդի անդամ,



կը մասնակցի ՍՕԽ-ի արծուիկներու տա-
րեկան բանակումներուն եւ իր ջերմ ու
համեստ նկարագրով կը խլէ շատ մը
կրտսեր արծուիկներու սրտերը: ՀՕՄ-ի
գործունէութեան աշալուրջ կը հետեւի եւ
մեծ հպարտութեամբ, որպէս պատգամա-
ւոր եւ կամ դիտորդ կը մասնակցի ՀՕՄ-ի
տեղական, շրջանային թէ համահայկական
պատգամաւորական ժողովներուն, Հալէ-
պի, Երեւանի եւ աւելի ուշ Մոնթրէալի
մէջ:

Կ'անդամակցի Հալէպի Համագգա-
յին «Նիկոլ Աղբալեան» մշակութային
միութեան եւ երկար տարիներ կը ծառայէ
մասնաճիւղի տիկնանց յանձնախումբին:
Մօրս մասին խօսելով, ինչպէ՞ս կարելի է
չյիշել Հալէպի ՀՄԸՄ-ի նշանաւոր պար-
տէզը: Հալէպի տրոփող սիրտը: Հալէպա-
հայերուն ժամադրաւայրը, մօրս համար
իր երկրորդ տունը, իսկ պարտէզ այցելող-
ները իր երկրորդ ընտանիքի անդամները:
25 տարիներ մաս կը կազմէ պարտէզի
տիկնանց յանձնախումբին: Այս աշխոյժ
առօրեային մէջ յաջորդաբար կ'ամուսնա-
նան իր երեք զաւակները: Մայրս կը
բախտաւորուի 7 թոռներով եւ 15 ծոռնե-
րով եւ կը ստանայ նշանաւոր տատիկի
կոչումը: 1999-ին կը կորսնցնէ զինք քա-
ջալերող ու զօրակցող ամուսինը, մեծ պա-

րապուծիւն մը ձգելով թէ մօրս եւ թէ
զաւակներուն ու թոռներուն հոգինե-
րուն մէջ:

Մօրս համար Հալէպէն բաժանու-
մը ծանր իրականութիւն կը դառնայ:
2012-ին Սուրիական քաղաքացիական
պատերազմներու հետեւանքով կ'անցնի
Պէյրութ, ապա վերջնականապէս կը
հաստատուի Մոնթրէալի մէջ: Իր կեան-
քի էջերէն նոր պատճէն մը կը բացուի
Մոնթրէալի մէջ: Զաւակ, թոռներ, ծոռ-
ներ եւ ՀՕՄ-ը: Անմոռանալի Հալէպը
միշտ զուգահեռ պահելով իր հոգիին ու
գործունեայ այս նոր կեանքին մէջ, ան
կը փորձէ ընտելանալ նոր շրջապատին:
Շատ չանցած, իր մէջ Հալէպի Քառաս-
նից Մանկանց եկեղեցին կը փոխարին-
ուի Ս. Յակոբ Մայր եկեղեցիով, իսկ
ՍՕԽ-ի «Անի» մասնաճիւղը՝ Մոնթրէ-
ալի «Սօսէ» մասնաճիւղով: Հոս ան-
գամ մը եւս շեշտակիօրէն կը ծաղկի
մօրս անձնաւորութիւնը իր ամբողջա-
կան պատկերով: Կը սիրէ եւ կը սիրուի
բոլորէն եւ կը դառնայ բոլորին ուշադ-
րութեան առարկան:

Հայրենիքը ամէն բանէ վեր էր,
հայ ժողովուրդի պատմութիւնը անոր
ցիր ու ցան վիճակը շատ կ'անհանգս-
տացնէին զինք: Հայ երգի ու երաժշ-
տութեան հետ հաղորդակից էր՝ դասա-
կան եւ նորագոյն երգիչներուն լաւա-
ծանօթ: Հորիզոն Շաբաթաթերթը իր
զրական եւ մանկապատանեկան յաւել-
ուածներով կ'ըմբոշխնէր:

Մօրս առօրեան հոծ էր հայկակա-
նութեամբ:

Եւ վերջապէս թոյլ տուէք այս
թնճկախաղի վերջին երկու մասնիկնե-
րով վերջնականապէս ամփոփել մօրս
պատկերը:

Մայրս օրինակելի ՀԱՅ ԿԻՆ եւ
անփոխարինելի ՄԱՅՐ էր:

Զեփիլու Հաճեան Ասատուրեան

RITA BAGHDASSARIAN Conseillère en Sécurité Financière Revenu Garantie Viager COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE • REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT 3820, boul. Lévesque Ouest, Bureau 101, Laval Qc. H7V 1E8 Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262 ritabagh@yahoo.com	VIZUALIS optométriste DR SHANT DONABEDIAN Centre d'Achat Fairview - Fairview Mall Pointe Claire 514 695 2555 - VIZUALIS.CA	Danièle Papazian, MSc. Courtier immobilier C 514.234.6799 dpapazian@remax-quebec.com www.remaxducartier.com RE/MAX DU CARTIER Agence immobilière 1290, rue Bernard Ouest, bureau 100 Outremont Qc H2V 1V9 T 514.271.2131
Assura Bien inc. Cabinet en assurance de dommages et de services financiers Ապահովագրական գրասենեակ KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN 970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc., H4T 1W7 T: 514.903.3999	Pâtisserie MAHROUSÉ FONDÉE EN 1970 9705 Boulevard de l'Acadie, Montréal, QC H4N 2W2 Tél: 514.279.1629 • info@mahrouse.ca • www.mahrouse.ca	JACOB & JACOB BODY SHOP CAS D'ASSURANCES 6280 St. Jacques, Montréal, Québec, H4B 1T6 Tél: (514) 484 - 7945 Fax: (514) 484 - 2487 jacobautobody@bellnet.ca www.carrosseriejacobetjacob.ca
RE/MAX RE/MAX 3000 inc. Agence immobilière Elie Berberian Courtier immobilier / Real Estate Broker C 514.519.3543 B 514.333.3000	KORONA JOAILLIERS • 1964 • JEWELLERS Daniel Torosian 3933 St Martin O. Coin Curé-Labelle Laval, Qc. 514-274-5555 450-688-5515 korona.ca	Assurances Allstate ASSURANCE Vrej Teslakian Agence du Quartier DIX30 9840, boul. Leduc 450-500-4736 V.Teslakian@allstate.ca *Marque de commerce utilisée sous licence par Allstate du Canada, compagnie d'assurance 035E 10657726
FIVE STAR ELECTRIQUE CINQ ÉTOILES SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING RESIDENTIAL-COMMERCIAL BEDROS NALPATIAN 442, LA RIVIÈRE, LAVAL, QC. TEL: 514-497-5155 FAX: 450-689-3997 E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM	CENTUM Metrocorp Wealth Solutions Inc. License # 12147 Mortgage programs for new comers to Canada New purchases Refinancing Second mortgages Self employed Low credit score Access to top lenders including private lenders SOSIE DERNERSESSIAN MORTGAGE AGENT LICENCE #M12001830 716 Gordon Baker Road, Unit 204A, Toronto Ontario M2H 3B4 416.662.6650 cell centum.ca/sosie_dernersesian	Pharmacie Levon Benonian et Mher Koubelian Inc. Pharmaciens-propriétaires 3915, Boulevard Samson Laval, QC H7W 2G1 T 450 688-4111 F 450 681-5525 Lun, au vend. : 8h30 à 21h Sam, et dim. : 9h à 17h Infirmière (jeudi) : 8h30 à 15h LIVRAISON GRATUITE Proxim

ԳՐԱԻՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

ՀՕՄ-ի Մոնիթրեալի եւ Լաւալի մասնաճիւղերու
Կանանց միջազգային օրուայ միացեալ ձեռնարկ՝
Կիրակի, 15 Մարտ 2020 Brunch

**ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային Վարչության սեփնար և
Գանատայի Շրջանի հիմնադրության 30-ամեակի տոնակատարություն
18-19 Ապրիլ 2020, Թորոնթո**

ԼՍԻՍԼ

Փոքրերու Ծաղկագարդ
4 Ապրիլ 2020

ՄՈՆԹՐԷԱԼ

Համագգայինի «Թե, սուրն եւ կարծիքներ» ակումբը կը մերկայացնէ «Investment for Soul Ինչպէս տանտէր դառնալ Հայաստանի մէջ»: Զեկուցաբեր՝ Ատոմ Մալխասեան (Civil Engineer-Majoring in concrete and highways). Հինգշաբթի, 19 Մարտ 2020-ին, երեկ. Ժամը 7:30-ին, Կեօմնեան Կեդրոնէն մերս: Մուտքի նուէր՝ \$5:

Տարեկան դրամահաւաքի բացառիկ համերգ մասնակցութեամբ աշխարհորչակ երգչուհի՝ Ալին Քուբան եւ դաշնակահարուհի Նարէ Արդամանեանը ի նպաստ Աթէն Արմէնեան հիմնադրամին որ կը տրամադրուի Հայաստանի մարզերու երաժշտական երիտասարդ տաղանդներ փաշայեթելու: Կիրակի 8 Մարտ 2020 երեկոյեան ժամը 7-ին: Պիտի խնդրուի չխաչացել: First Armenian Evangelical Church, 11455 rue Drouart, Montreal
www.AtkenArmenianFoundation.com:

ՑԱԻԱԿՑԱԿԱՆ

Համազգային Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Մոնթրէալի «Սանահին» մասնաճիւղի վարչութիւնը խորին ցաւակցութիւններ կը յայտնեն Տէր եւ Տիկին Բաֆֆի եւ Սոնիա Անէմեաններուն ու իրենց զաւակներուն Վայֆին եւ Վէմին, իրենց մօր եւ մեծ-մօր՝ տիկին **ԱՇՈՒՆ ՏԱՂԼԵԱՆ ԱՃԷՄԵԱՆ**ի մահուան տխուր առիթով:

ԱՆՓՈՓՈԽԵԼԻՆ... Սկիզբը էջ 7

Անփոփոխելի է նոյնպէս անհատին դերի ըմբռնումը, այսինքն, ժողովներու եւ մարմիններու գերադասութիւնը անհատ ընկերոջ նկատմամբ, որքան ալ այդ ընկերը կարեւոր հանգամանք ունենայ: Զկայ կուսակցապետ, կուսակցութեան ղեկավար, կայ հաւաքաբանական ղեկավարութիւն, որուն պարտականութիւնն է դործադրութիւնը ժողովներու որոշումներուն:

Վերջապէս անհովիտներէի է գաղափարական կեդրոնացման եւ կազմակերպական ապակեդրոնացման յղացքը, որ կուսակցութիւնը կը պահէ որպէս մէկ կուռ ամբողջութիւն, միաժամանակ ընծայելով տեղական պայմաններուն համապատասխան գործունէութիւն եւ գործելակերպ մշակելու հնարաւորութիւնը:

Իսկ փոփոխելի կրնան ըլալ բոլոր այն յօդուածները որոնց յստակացումով կամ բարելաւումով առաւել կը շեշտուին վերեւ նշուած անփոփոխելի սկզբունքները...

*Անհրաժեշտ է կարդալ Նիկոլ Աղբալեանի (Ն.Հանգոյց) «Մտածումներ Հ.Յ. Դաշնակցութեան մասին» գրքոյկը (Փարիզ 1930), որ ներառուած է նաեւ իր ամբողջական գործին մէջ:

ՄՈՆԹՐԵԱԼԻ ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ ՎԵՐԱՀՄԿԻՉ

Մոնթրեալի Հայ Կեդրոնը կարիքն ունի կեդրոնիս շենքերու, յարկաբաժնի, ենթակառուցուածքի, սրահներու ապահովման եւ վարձակալական գործառնութեանց, համաձայնագրերու կիրարկման (ընդհանուր մաքրութեան, Զիւնի մաքրութեան, այլ մատակարարողներու եւայլն), «Արթօ եւ Ալիս Մարգարեան» ճաշասրահի, կեդրոնիս պաշտօնեաներու վերահսկիչ պատասխանատուի մը, որ ունի նաեւ այլ պատասխանատուութիւններ՝ կապուած Կեդրոնի, Տարեկան Քերմէսի, Դրամատուներու, եւ եկեղեցւոյ գործունէութեան հետ:

Թեկնածուն պետք է.

- Բաժնե Մոնթրեալի Հայ Կեդրոնի արժեքները
- Տիրապետել բերանագի Հայերեն, Ֆրանսերեն եւ

Անգլերեն լեզուներուն: Գրաւոր լեզուներու տիրապետումը առաւելութիւն:

- Ունենայ գործածական գիտություն Microsoft Office-ի հիմնական ծրագրերուն
- Ատակ ըլլայ
 - Ներդաշնակ յարաբերութիւն զարգացնելու եւ պահելու պաշտօնակիցներու եւ այլ գործընկերներու հետ
 - Պատասխանելու ներքին եւ արտաքին կարիքներու

Պայմաններ.

- Ըլլայ մատչելի շտապ (urgent) պարագաներու 24/7
- Շաբաթական 40 ժամ վճարուած
- Տարեկան 3 շաբաթներ արձակուրդ
- Տարեկան Քերմէսի գործունեայ մասնակից

Դիմում

Հետաքրքրուողներին կը խնդրուի դիմել Ե-նամակով՝ eglise@sourphagop.net հասցեին, ամենէն ուշը մինչեւ Ռուբրաթ 28 Փետրուար 2020: Ե-նամակը, դիմումագիր նամակի կողքին, պէտք է ընդգրկէ աշխատանքային փորձառութեան ամփոփ պատկեր մը (CV):

Միայն տեսակցութեան հրաւիրուող թեկնածուները պատասխան պիտի ստանան:

**Ունկնդրեցե՛ք Գանատայի տարածքին
սփռուող հայկական ռատիոժամերը՝**

ՎԱՆԳՈՒԿԸՐ - «Armenian Variety Show» Coop Radio 100.5 FM
Երեքշաբթի երեկոները ժամը 6:00-7:00

ԹՈՐՈՆԹ՝ «Կիլիկիոյ Զայն» ՀԻՏՕ AM 1690
Կիրակի երեկոները ժամը 8:00-11:00

ՍՈՆՔԻԷԿԼ- «Հայ Կեդրոնի Ձայն» 105.1 FM
Երկուշաբթի երեկոները՝ ժամը 9:30-12:00
Շաբաթ առաւօտները ժամը՝ 7:30-9:30
Կիրակի առաւօտները ժամը 7:00-8:00
«Վանայ Ձայն» 1450 AM
Երկուշաբթի երեկոները ժամը 8:00-10:00

ՀԱՄԻԼՏՆ- «Հայ Կեդրոնի» ռադիոժամ CFMU 93.3 FM
Կիրակի առաւօտեան 10:00-11:00
cfmu.mcmaster.ca

Այցելեցեք hitunes.ca կայքէջը եւ
օրական 24 ժամ ունկնդրեցեք
Սառա Եղիայեանի կողմէ
ընտրուած հայկական երգերը

HITUNES.CA

Ունկնդրեցե՛ք **triktrak.ca** կայքէջի հայկական համացանցային ռադիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամեն հինգշաբթի երեկ. ժամը 8:00 - 9:00
կսեցե՛ք շահեկան հարցազրույցներ



TRI/TRAK.CA

horiZon

H O R I Z O N
Hebdomadaire arménien
Armenian Weekly
 Publié par / Published by
Les Publications Arméniennes
(1991)
 3401, Olivier-Asselin
 Montréal, Québec
 Canada H4J 1L5

**Abonnement annuel /
Yearly subscription**
Canada
2^e classe - 2nd class: \$80
plus applicable taxes
1^{re} classe - 1st class: \$95
États-Unis / USA
1^{re} classe - 1st class: \$95 US
Ailleurs / Elsewhere
1^{re} classe - 1st class: \$125 US

Administration / Publicité
 Sylva Ehamrdjian-Bachekjian
(General Manager)
 Tél.: (514) 332-3757
 Télécopieur/Fax (514) 332-4870
 E-Mail:sylva@horizonweekly.ca
 Courrier de deuxième classe
 /No. 40065294 / Second class mail
 Dépôt légal: bibliothèques nationales
 du Québec et du Canada - ISSN 0708580X

Վարդի խմբագիր՝
Վահագն Գարագաշեան
Վարչական պատասխանատու՝
Սիլվա Պաշըզեան
Քարտուղար՝ Մարինա
Տեր խաչատրյան
Առաջ խմբագիր՝
Վրեժ-Արմեն Արքիմեան
Անգլերեն/Ֆրանսերեն՝ Վիգեն Աբրահամեան, Թինա Սիլվահեան
Հեատորում՝ Նենսի Կրքակոսեան
Սրբագրի՝ Զրիստափոր Միքայելեան

**Թորոնթոյի
Ներկայացուցիչներ՝**

Գրիգոր Հոթոյեան, (416) 494-1921
Ժազ Վարպետեան, (416) 722-9225

Լուսանկարիչներ՝ Արմեն Ալեմեան, Մայք Թաշճեան, Իշխան Ղազարեան, Վազգեն Տեկիրմենթաշ

Financé par le
gouvernement
du Canada

Funded by the
Government
of Canada

Canada

ԱՍՏՂԱԳՈՒՇԱԿ



ԽՈՅ (21 Մարտ 20 Ապրիլ) - Նիւթական բաւական լաւ վիճակ մը ունիս։ Ուստի այս օրերուն պիտի կարենաս բոլոր գնումներդ կատարել։ Զեզ միակ մտահոգողը քու ներկայի ֆիզիքական վիճակդ է։ Բժիշկներուդ խրատականներուն լրջօրէն հետեւէ՛։ Սիրած անձդ քեզի լաւ անակնկալ մը պատրաստած է։

ՅՈՒԼ (21 Ապրիլ 21 Մայիս) - Շատ հաւանաբար քիչ մը չափէն աւելի զգացական կը մօտենաս ամէն հարցի։ Մման բաներու ժամանակը անցած է։ Իրապաշտ պէտք է ըլլալ եւ կեանքը ապրիլ այնպէս ինչպէս որ է։ Երագելը լաւ բան է եւ արդիւնաւետ՝ եթէ անոր ընկերանայ նաեւ գործնական աշխատանք եւ յարատեւութիւն։

ԵՐԿՒՈՐԵԱԿ (22 Մայիս 21 Յունիս) - Այս օրերուն սկսած եւ ըսելիքներդ տեւաբար կրկնել եւ քիչ մըն ալ յամառօրէն վիճիլ։ Լաւ նշան չէ։ Այս մէկը առողջ մտքի արդիւնք չէ։ Ուստի շուտով վերադարձիր նախկին վիճակիդ եւ ուրիշները մտիկ ընել սորվիր։ Գործիդ մէջ անհամ

վիճակ մը ստեղծուած է։ Դուն այս մէկուն բանալին ունիս։

ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիս 23 Յուլիս) - Շնայլ մի ըլլար ծախսերուդ մէջ։ Նոյնպէս ջանա՝ լեզու գտնել շրջապատիդ հետ, որպէսզի սխալ մը չգործես։ Մարգանք ըրէ, որպէսզի բարելաւուի ոչ միայն քու ֆիզիքականդ, այլեւ՝ հոգեկան վիճակդ ալ։ Դեռաւոր անցեալէն եկած յիշատակներ պիտի յայտնուին երագիդ մէջ։

ԱՌԻԻԾ (24 Յուլիս 23 Օգոստոս) - Ծաբաթը քիչ մը ոչ քաջալերական կրնայ ըլլալ, բայց դուն պէտք է կեդրոնանաս օրուան աշխատանքներուդ վրայ։ Դետեւիր նախազգացումներուդ թելադրանքին եւ ոչ՝ ուրիշին։ Շատ լաւ արդիւնք պիտի ունենայ քու այս կեցուածքդ։ Աշխատիր կեդրոնացեալ տրամադրութեամբ։

ԿՈՅՍ (24 Օգոստոս 23 Սեպտեմբեր) - Մտահոգութիւններդ մէկ կողմ դիր եւ հոգ տար քու արդուզարդիդ։ Այս շաբաթավերջին անակնկալ հիւրեր կրնաս ունենալ, հետեւաբար գաւոնք ընդունել սիրալիր եւ եղիր ներկայանալի։

Աշխատանքի մարզին մէջ սպասողական վիճակ պիտի ունենաս։ Թեզմէ կը պահանջուի ըլլալ համբերատար։

ԿՇԻՌԶ (24 Սեպտեմբեր 23 Հոկտեմբեր) - Այս շաբթուան ընթացքին հոգեմտաւոր տրամադրութեամբ պիտի քննարկես օրուան հարցերդ՝ նոր ուղղութիւն մը տալով որոշումներուդ։ Դետեւէ նախազգացումներուդ։ Մարգանք կատարէ կանոնաւոր կերպով։ Այսպիսով պիտի ունենաս շատ լաւ ֆիզիքական։ Դոգ տար առողջութեանդ։

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբեր 23 Նոյեմբերի) - Զեզմէ վերջնական որոշում մը մը կ'անկնկալուի։ Շրջապատդ յուսախաբ մի ըներ։ Միայն դուն պիտի կարենաս որոշ չափով խաղաղութիւն բերել շրջապատեղ ներս։ Ուստի, քիչ մը աւելի ներողամիտ աչքով դիտէ ամէն բան։ Նոր

լուր մը իրապէս պիտի փոխէ ներկայ վիճակդ։ Մի յուսահատիր։

ԱՐԵՂՆԱԴՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) - Մեծածախս ծրագիր մը սկսած է միտքդ չարչրկել։ Մէկդի դիր բոլոր զգացումներ։ Եւ որովհետեւ ուրիշներ կրցած են յաջողիլ, այդ չի նշանակեր, որ քու պարագայիդ ալ նոյնը կրնայ պատահիլ։ Նիւթական վիճակդ պիտի բարելաւուի։

ԱՅԾԵՂՁԻՐ (22 Դեկտեմբեր 20 Յունուար) - Որպէսզի ներկայ առողջական վիճակդ քեզ աւելի չմտահոգէ, լաւ պիտի ըլլար, որ մարգանքներուդ կողքին բժիշկներուդ խորհուրդները մտիկ ընէիր։ Բայց լաւ յիշէ. շուրջիներդ ալ բժիշկներ չեն։ Ինքզինքդ ճանչցիր եւ երբեմն ալ դուն քու բժիշկդ եղիր։

ԾՈՎԱՆՈՒԸ (21 Յունուար 19 Փետրուար) - Ընտանեկան շրջանապատիդ մէջ բաւականին մանր դէպքեր կրնան պատահիլ, եթէ դուն՝ այդ բոլորին առաջը չառնես։ Նախ մտիկ ըրէ. այլ խօսքով լսել գիտցիր։ Ամէն մարդ կը կարծէ, որ ինքն է իրաւն ու ճշմարտախօսը։ Ճամբորդութիւնդ յետածգէ եւ միայն ներկայ գործիդ վրայ կեդրոնացիր։

ՁՈՒԿ (20 Փետրուար 20 Մարտ) - Ինքնավստահ մուտք գործէ քու շրջապատեղ ներս։ Ըսելիքներդ յստակօրէն ըսէ եւ դուն քեզ արժեւորէ։ Մի վախճար. այսպէս կամ այնպէս մարդիկ պիտի խօսին։ Լաւ է, որ սիրտդ պարպես։ Բարեկամ մը շուտով աւետաբեր լուրերով պիտի ներկայանայ եւ դուն ալ պիտի զարմանաս։



3401, Olivar Asselin, Montréal, Qc H4J 1L5

—

397, boul. des Prairies, Laval, Qc H7N 2W6

—

45 Hallcrown Place, Willowdale, On M2J 4Y4

ՀՈՐԻԶՈՆԻՆ **Էօժէնի Փափազեան Գոգորեանի մահուան առթիւ**
Պետրոս եւ Սոնիա Գոգորեան 100

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐ-ԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՆԻՔԻ ՆԱԼԲԱԿԵԱՆի մահուան առթիւ

Տ. եւ Տ. Արտօ Գաբրիէլեան 30
Տ. եւ Տ. Պետրոս Նալբազեան 100

ՆԱԶԱՐԷԹ ՌՈՍՏՈՄ ՄԱԼ–ԽԱՍԵԱՆի մահուան առթիւ
Ժորժէթ Գրայեան 50

Աստմ, Սեդա Մալխասեան 100

Լինտա Թորոսեան 100
Յակոբ, Շաքէ Փանոսեան, Բրիաթրֆըր, Վիքի Փանոսեան 100

Յակոբ, Ծովիկ Կուտեան 50
Ալիս, Հերա Մալխասեան 50
Մանուէլ, Նանսի, Ճէսիքա, Էմիլի Մարկոբեան 50
Տ. եւ Տ. Վիգէն Սարգիսեան 30

Արա, Անի ՅՀանեան 50
Adrien, Nancy Slater 100
Francis Chow, family 100
Michael Haig 100
Clarissa Procaccini 100

Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՈՅ, ԼԱ–ԻԱԼ
Ողբ. ԱՆԱՀԻՏ ՏԷՄԻՐՃԵԱՆ–ԿԻՐԱԿՈՍԵԱՆի մահուան առթիւ,

Փոխան ծաղկեպսակի։
Տ.Տ. Սերոբ, Ֆլորա Կիրակոսեան 200
Տ.Տ. Արա Կիրակոսեան 100
Տ.Տ. Անդօ, Անի Գըլնճեան եւ զւկնք. 100

Տ.Տ. Զարեհ, Նաթալի Պոյաճեան 50

Տիկ. Մարի Կիրակոսեան 50
Տ.Տ. Արամ, Լիզա Տէմիրճեան 50

Տ.Տ. ՄՀեր, Մակի Տէմիրճեան 50

Տ.Տ. Հրակ, Ժօալին Տէմիրճեան 50

Տ.Տ. ՅովՀաննէս, Մարօ Գալայճեան 50

Տիար Ժան Պաքոս եւ զւկնք. 250

Տ.Տ. Էտմօն, Մօնիք Պաքոս, Փաթրիք եւ Մէլանի 200

Տիար Ալպէր Պաքոս եւ զւկնք. 100

Տ.Տ. Վահէ Ժամկոչեան 100
Տիկ. Ռօզին Պետրոսեան եւ զւկնք. 100

Տ.Տ. Գօգօ, Արփի Զաքարեան 100

Տ.Տ. Հաբմա, Ժանին Գուլեան 100
Տիկ. Անի Սապունճեան 100
Տ.Տ. Գէորգ, Մարօ Թորաճանեան 50

Տ.Տ. Պետրոս Ալահայտոյեան 40

Տ.Տ. Տիգրան Վահրատեան 50

Տ.Տ. Յակոբ, Սալբի Լախոյեան 50

Բըշ. Յարութիւն Սրկ. եւ Հերմինէ Մանուկեան 50

Տ.Տ. Կիրակոս, Լենա Աբրահամեան 20

Տ.Տ. Մոսիկ, Սեդա Թօփուղեան 25

Տ.Տ. Վահագն Յովսէփեան 30

Տ.Տ. Թորոս, Լորի Տիմիթեան 50

Տ.Տ. Անդրանիկ Եունանեան 40

Տ.Տ. Սարգիս Արմուտեան 40

Տ.Տ. Սիմօն, Մարիա Լախոյեան 20

Տ.Տ. Կարապետ Իսկէնտէրեան 50

Տ.Տ. Ճորճ, Վերժին Կարապետեան 25

Տիկ. Սօսի Յակոբեան 30

Տ.Տ. Փիէռ, Ծովիկ Թերզեան 30

Տ.Տ. Գօգօ, Վերա Պաղտասարեան 50

Տ.Տ. Սերոբ, Թալին Յակոբեան 50

Տ.Տ. Պաղտասար, Նարինէ Մարտիկեան 20

Տ.Տ. Յակոբ, Անահիտ Միլնասեան 20

Տ.Տ. Սահակ Սատաքեան 20

Տիկ. Սօնա Ուրիշեան 50

Տիկ. Սիլվա Ազատեան 40

Տիկ. Փայլածու Քարակէօզեան–Քէշիշեան 50

Տ.Տ. Էտուար Տէտէլեան 20

Տիար Արտօ ՕՀանեան 50

Վիքի Եունանեան 50

Տ.Տ. Ժիրայր Ժամկոչեան 50

Տ.Տ. Նարեկ Գուշաքճեան 20

Տիկ. Մարալ Մարաշլեան 25

Տ.Տ. Սերոբ, Թալին Յակոբեան 75

Տ.Տ. Կէրի, Անգինէ Արթինեան եւ Վիգէն 50

Տ.Տ. Թոնի, Թալին Հարաուի 20

Ողբ. ՀՈՒՐԻ ԳԷՈՐԳԵԱՆ–ՔԷ–ՊԱՊՃԵԱՆի մահուան առթիւ,

Փոխան ծաղկեպսակի։

Զաւէն Տարազճեան ընտանիք 100

Տ.Տ. Շանթ Պուլոս 25

Տ.Տ. Վարդէս Չէրշեան 20

Տ.Տ. Յարութիւն Միքայէլեան 20

Տ.Տ. Յակոբ Աճէմեան 20

Տ.Տ. Պօղոս, Արտա Կիւլեան 20

Սարգիս Թերզեան 20

ՅովՀաննէս Ուշոյեան 20

Տ.Տ. Ժօզէֆ ՕՀաննէսեան 20

Տ.Տ. Վահէ Գրիգորեան 20

Մինաս Գարամինասեան 20

Mikhael Alkaed 20

Կարպիս Ճապարեան 20

Արամ Սալօ 50

Ուաշիկ Տէրբաշեան 20

Տիկ. Նելլի Համայեան 30

Տ.Տ. Գէորգ Ֆլատքճեան 20

Տ.Տ. Սահակ Մարտիկեան 20

Տ.Տ. Ճորճ Պալիոգեան 25

Յարութիւն Թաթարեան 10

Գօգօ ԱՀարոնեան 10

Ողբ. ԼՈՒՍԻՆ ՍԱՐԳԻՍԵԱՆի մահուան առթիւ,

Փոխան ծաղկեպսակի։

Տիկ. Արաքս Թօփճեան, Տ.Տ. Գրիգոր Թօփճեան եւ զաւակ, Տ.Տ. Շանթ Թօփճեան եւ զաւակ150

Տ.Տ. Կարօ, Մարինա Մարտիկեան ընտանիք 50

Տ.Տ. Պետիկ. Մարթա Մարտիկեան ընտանիք 50

Տ.Տ. Յակոբ, Անահիտ Թէպլըճեան 50

Տ.Տ. Ճորճ, Հիլտա Թէպրէճեան ընտանիք 50

Տիկ. ԶուարթՍարգիսեան–Այվազեան ընտանիք 100

Տ.Տ. Փաթրիք ԳատէՀի 100

Տ.Տ. Յարութ, Մարլէն Ժանիքեան 30

Տիկ. Մակի Կարապետեան ընտանիք 50

Տ.Տ. Հրաշ, Աշխէն Մուրատեան 60

Տ.Տ. Արա Մոմճեան 30

Տիար Ճորճ Վարդանիան 50

Տ.Տ. Ռաֆֆի, Նանոր Զաքարիա 50

Տիար Գէորգ Նալպանտեան 20

Տ.Տ. Կարօ Գարամանեան 50

Roger De Martini Famille 50

Տ.Տ. Ճորճ Գանահեան 20

Թիւֆէնճեան եղբայրք 50

Ողբ. ԱՍԻԱ ԱՍԱՏՐԵԱՆի մահուան 40–իին առթիւ,

մահացած խնայատան։

Տ.Տ. Սարգիս, Լիլիթ Եազուպեան 20

Տ.Տ. Հայկազ, Վիքթորիա Եազուպեան 25

Ողբ. ԳԷՈՐԳ ՖԸՏՏՔՃԵԱՆի մահուան 13–րդ տարելիցին առթիւ,

ԱՍԱՏՈՒՐ, ՃԷՅՄՍ եւ ԱՆԱՀԻՏ ՍԷԹԵԱՆներու եւ Համայն

ՅՈՎԱԿԻՄԵԱՆ եւ ՖԸՏՏՔՃԵԱՆ ընտանիքներու ննջեցեալներու յիշատակին։

Տիար Գրիգոր Տէմիրճեան եւ զւկնք. 50

Տ.Տ. ՅովՀաննէս Տէմիրճեան 20

Տ.Տ. Սարգիս, Սիրան Տէմիրճեան եւ զւկնք 20

Ողբ. ՍԱՐԳԻՍ ԱԳԱՄԵԱՆի, ՄԱՐՏԻՐՈՍ ՊԵՏՐՈՍԵԱՆի, ՍԱՐԳԻՍ ՉԱՔԱՐԵԱՆի եւ Համայն ՊԵՏՐՈՍԵԱՆ եւ ԱԳԱՄԵԱՆ

ընտանիքներու ննջեցեալներու յիշատակին։

Տիկ. Վարդուհի Պետրոսեան 20

Ողբ. ՍԻՐԱՆՈՅԵ ՄԱԼՈՅԵԱՆի յիշատակին։

Տիար Գասպար Մարգարեան ընտանիք 25

Ս. ԱՍՏՈՒԱՄԱՆԻՆ ԵԿԵՂԵՑ–ԻՈՅ, ԹՈՐՈՆԹՕ
Ողբ. Ներսէս Կէտիկեանի մահուան առիթով
Յակոբ եւ Ծովիկ Կէտիկեան

100

Էլիզա Տէրտէրեան եւ ընտանիք 50

Էլի Իշխանեան եւ ընտանիք 50

Միհրան Ճիգմէճեան եւ ընտանիք 50

Տիկ. Զարուհի Հասըրճեան 30

Սարգիս եւ Ֆրանսիս Սարգիսեան 50

Մանուկ Պաղտասարեան եւ ընտանիք 25

Եղիշ եւ Թանիա Տարազճեան 90

Յարութ Տարազճեան 50

Արաքսի Շարխոյեան եւ ընտանիք 50

Յարութ Ճիգմէճեան ընտանիք 50

Յարութ եւ Սիլվա Տարազճեան 50

Հրայր եւ Անի Թիւսիզեան 40

Արփի Քէօշկէրեան եւ ընտանիք 100

Արմէն եւ Այտա Կէտիկեան 50

Յարութ եւ Ռինէ Արապեան 50

Յակոբ Արապեան եւ ընտանիք 40

Ողբ. Անի Տէմիրճեանի մահուան առիթով



MANOIR
DE CASSON

775 rue Muir, St-Laurent, Québec H4L 5H1
manoir.info@retirementconcepts.com | 514.748.1396

Résidence pour personnes âgées autonomes!

Studios, grands studios, 3 1/2, 4 1/2
disponibles dès maintenant
au magnifique Manoir de Casson.

**SIGNEZ VOTRE BAIL AVANT LE 30 AVRIL, 2020,
ET OBTENEZ UN MOIS GRATUIT!**

Contactez-nous dès aujourd'hui pour organiser
votre visite et découvrir pourquoi

il fait bon vivre au Manoir.

@RETCONCEPTS

WWW.RETIREMENTCONCEPTS.COM



BARRY K A Z KAREN A N ALEX D J GARO I A N



514 333. 3000



EXPERTISE EXPÉRIENCE EXCELLENCE

CLASSÉS PARMIS LES MEILLEURS COURTIERIS RE/MAX AU NIVEAU MONDIAL
RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS WORLDWIDE

RE/MAX 3000
AGENCE IMMOBILIERE

SIEGE SOCIAL: 9280 L'ACADIE, MONTREAL, QC H4N 3C5
PAVILLON: 2500 DES NATIONS 102. SAINT-LAURENT. QC H4R 3J9